Между тем в период с IV в. до н.э. – по III в. н.э. (время, которое интересует Халилова) не существовало "одного государства" в означенных им границах, хотя бы по той простой причине, что, по крайней мере, со II в. до н.э. правобережье Куры составляло часть Армении (что вынуждены признать даже азербайджанские историки И.Алиев, "История Азербайджана

\* Кстати, Халилов не имеет четкого представления о границах Албании. Только этим можно объяснить, что в другой своей работе, южные части междуречья Куры и Аракса он неожиданно включает в состав Атропатены.<sup>32</sup>

"и др. ) и совершенно очевидно, что археологическая культура этой зоны Куры должна была отличаться от разнотрибной культуры левобережья. Таким образом, "научные основания " говорить о двух самостоятельных археологических культурах, как видим , есть . Что же касается "хронологического " совпадения материалов двух культур, то оно не может быть аргументом в пользу единства последних . Истина же заключается в том, что в интересующий Халилова период, на правом и левом берегах Куры самостоятельно развивались две совершенно разные культуры, - с одной стороны, культура давно уже сформировавшегося армянского народа, с другой- формирующегося албанского этноса, "некоей метатрибической политической общности, обладавшей определенной перспективой (правда, не осуществившейся) консолидироваться в этнос".<sup>33</sup>

### Ամփոփում

Մոմենտական Ադրբեյջանի կազմավորումից հետո ադրբեյջանական պատմական գիտության ծրագրային գիծ է դարձել Կովկասյան Աղվանքի հին ցեղերի և ժամանակակից ադրբեյջանցիների միջև էթնոգենետիկական կապը ապացուցելը: Ի դեպ, Արցախը հայտարարվում էր Աղվանքի անբաժանելի մասը, իսկ նրա բնակչությունը՝ աղվանցիներ կամ, լավագույն դեպքում, հայացված աղվանցիներ:

Հոդվածում համապատասխան աղբյուրների ու գրականության վերլուծության հիման վրա ցույց է տրվում այդ վարկածի անհիմն լինելը և նշվում է, որ դեռևս մ.թ.ա. VI դ. սկսած ոչ միայն Արցախի, այլ նաև ամբողջ Կուր-Արաքսյան միջագետքի բնակչությունը հայկական էր:

### Резюме

После образования Советского Азербайджана программной линией азербайджанской исторической науки стало стеремление доказать этногенетическую преемственность между древними племенами Кавказской Албании и современными азербайджанцами. При этом, Арцах объявлялся неотъемлемой частью Албании, а его население – албанским или в лучшем случае арменизированной албанцами.

В статье, на основе анализа соответствующих источников и литературы показывается несостоятельность подобной концепции и отмечается, что начиная, по крайней мере с VI в. до н.э., население не только Арцаха, но и всего междуречья Куры и Аракса было армянским.

### Примечания

1. Т.И.Тер-Григорян. Нагорно-Карабахская автономная область . Известия Аз. ФАН СССР, N 4, Баку, 1939; В Левиатов. Очерки из истории Азербайджана в VIII веке. Баку, 1948 К.Алиев. Племена древней Кавказской Албании (Ів. до н. э. – I в. н.э.) автоф. канд. дисс., Баку, 1962, И.Алиев. Нагорный Карабах. Баку, 1989 и др.
2. В.Левиатов, указ. соч., З.Бунятов, Азербайджан в VII-Іхвв., Баку, 1965; И.Алиев, указ. соч.; Ф.Мамедова. Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н.э. -VIII в. н.э.). Баку, 1986 и др.
3. И.Алиев. указ. соч.; Д.А.Ахундов. Архитектура древнего и средневекового Азербайджана. Баку, 1986; А.Мамедов. Некоторые аспекты современной этнической ситуации в Азербайджане. " Центральная Азия и Кавказ " , N 5 (6), 1999, и др.



4. Новый Восток. Журнал Всероссийской научной ассоциации Востоковедения при народном комиссариате по делам Национальностей. 1923, N 3. "Современный Азербайджан"; Известия Азербайджанского археологического комитета. Баку, 1926, выпуск второй.
5. Т.И.Тер-Григорян. Нагорно-Карабахская автономная область. В Левиатов. Очерки из истории Азербайджана в VIII веке. "История Азербайджана", т. I, Баку, 1958 и др.
6. З.Ямпольский. Об этногенетической непрерывности на почве Азербайджана. В кн. "Вопросы истории Кавказской Албании", Баку, 1962; К.Алиев. Племена древней Кавказской Албании (Ив. до н. э. – I в. н.э.) "История Азербайджана" т. I и др.
7. Մ. Ջոլաշյան, Հայոց ցիտանորյան խեղաթյուրումը արդի բնիկ ցիտանադորյան մեջ. Երևան, 1995, էջ. 9, 17-18
8. Новый Восток..., с. 182
9. Там же, с. 171
10. В.Григорян. Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992, с.29
11. Там же, с. 35
12. А.Мамедов. Некоторые аспекты современной этнической ситуации в Азербайджане.
13. В.Левиатов, указ. соч. с.147
14. Т.Тер-Григорян, указ. соч. с. 15
15. см. примечание 6
16. З.Ямпольский. Об этногенетической непрерывности на почве Азербайджана, с. 41
17. Strab. xI, 4,6 см. В.В.Латышев. Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе. Вып. I. СПб, 1890
18. В.Бартольд. Краткий обзор истории Азербайджана. соч. т. II, кн. 1, М., 1963, с. 775
19. И.Алиев. Нагорный Карабах, с. 13-14
20. Там же, с. 15
21. Т.Гамкрелидзе, Вяч. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы, т. 1-2, Тбилиси, 1984
22. "История Азербайджана", с. 79
23. там же, с. 28
24. К.Алиев. Племена древней Кавказской Албании
25. там же, с. 7
26. там же
27. Ռ. Հարությունյան, Ն. Քոչար, Ի՞նչ են ցիտանոյ մեր գեները. Երևան, 1989, էջ 55, 61-62
28. А.К.Алекперов. Исследования по археологии и этнографии Азербайджана. Баку, 1960. с. 26-34, 43-44
29. Дж. Халилов. Материальная культура Кавказской Албании (Iв. до н.э.-IIIв. н.э.) автореф. докт. дисс., Баку, 1974, с. 7, 19
30. там же, с. 25
31. там же, с. 37
32. Археология СССР. Древнейшие государства Кавказа и Средней Азии., М., 1985, с. 105
33. А.Акопян, М.Мурадян, К.Юзбашян. К изучению истории Кавказской Албании. В кн. : К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении. Ереван, 1991, с. 330



## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ՕԴՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

### Ռ. Զ. Աղաբեկյան

#### Մանկավարժական և հոգեբանական ամբիոն

*Մանկավարժական կրթությունը համալսարանում անհրաժեշտաբար ներառում է տնտեսական և փորձուսուցման կապի մեթոդաբանական սկզբունքի իրագործում ապագա ուսուցչի լինելության բոլոր փուլերում միջբուհական, բուհական, ներբուհական: Այդ սկզբունքը ներառում է մանկավարժական փորձուսուցումը որպես ապագա ուսուցչի պատրաստման կարևորագույն բաղադրիչ:*

Մանկավարժական փորձուսուցման ընթացքում պլակտիկան-ուսանողների դժվարացումների, թույլ տված սխալների, թերությունների համակողմանի վերլուծությունը մեզ թույլ է տալիս բացահայտել մանկավարժական փորձուսուցման օպտիմալացման ուղիներն ու միջոցները համալսարանական կրթության պայմաններում:

Մեր կարծիքով այդ նպատակով կատարելիք առաջին քայլը մանկավարժական փորձուսուցման կազմակերպման և վարման գիտական հիմնավորումն է: Դա հնարավոր է այն դեպքում, եթե մշակվի ժամանակակից ազգային դպրոցի ուսուցչի գիտականորեն հիմնավորված մասնագիտացումը և որոշվի այն տեղն ու դերը, որ մանկավարժական փորձուսուցումը գրավում է ապագա մանկավարժի պատրաստման թաղի համակարգում:

Այդ ուղղությամբ կատարելիք ներկրորդ քայլը մանկավարժական փորձուսուցման գործառնությունների բացահայտումը, դրանց վերլուծությունը, դիտարկումն է ամբողջական միասնության մեջ: Օ. Ա. Աբդուլինյան իր հատուկ կազմակերպած հետազոտությամբ առանձնացրել է մանկավարժական փորձուսուցման հետևյալ գործառնությունները. ուսուցանող, զարգացնող, դաստիարակող և ակտիվորդ /դիագնոստիկական/: Մանկավարժական փորձուսուցման ուսուցանող գործառնությանի տակ հեղինակը նկատի ունի հետևյալը. մանկավարժական փորձուսուցման ընթացքում ամրակայվում են ուսանողի ձևոր բերած գիտելիքները, կարողությունները, մանկավարժական համոզմունքները: Փորձուսուցումը հնարավորություն է տալիս ուսանողին խմստավորելու իր գիտելիքները, ճանաչելու դրանց բովանդակությունը և ծավալը, կայունությունն ու գործունեությունը, առաջանում է պակասող, թերի գիտելիքները լրացնելու անհրաժեշտություն, ինքնակրթությամբ զբաղվելու պահանջմունք: Ստեղծվում են իրական հնարավորություններ՝ մասնագիտական առարկաներից, մանկավարժափոքրեանական առարկաներից և մասնավոր մեթոդիկայից ստացած լրատվությունը օգտագործելու, փորձուսուցման ընթացքում առաջացող ուսումնա-դաստիարակչական բնույթի այլազան խնդիրները պրոֆեսիոնալ մակարդակով լուծելու համար: Մանկավարժական փորձուսուցումն անփոխարինելի միջոց է ուսանողի համար:

Մանկավարժական փորձուսուցման զարգացնող գործառնության արտահայտվում է նրանում, որ այն ամրապնդում է ուսանողների իմացական և ստեղծագործական ընդունակությունները, որոնք նպաստում են ապագա մանկավարժի պրոֆեսիոնալ գիտակցության ձևավորմանը, մանկավարժական մտածողության զարգացմանը, իր մանկավարժական գործունեության ինքնավերլուծմանը և ինքնագնահատմանը, ստեղծագործական կարողությունների մշակմանը:

Փորձուսուցման ընթացքում ուսանողը հնարավորություն է ստանում ավելի մոտիկից ծանոթանալու մանկավարժական գիտահետազոտական /թե՛ էմպիրիկ հետազոտության և թե՛ տեսական հետազոտության/ մեթոդներին, խմստավորելու և կիրառելու դրանք, աստիճանաբար ընտելանալու ստեղծագործական բնույթի աշխատանքներին, որոնք ներհատուկ են ուսուցչի գործունեությանը: Այդ ուղղու հիման վրա զարգանում է ապագա ուսուցչի մանկավարժական դիտունակությունը, ձևավորվում են մանկավարժական տեխնիկայի նրա կարողությունները, դրվում են գործունեության անհատական ոճի հիմքերը:

Մանկավարժական փորձուսուցումը կատարում է լուրջ դաստիարակչական գործառնությա: Ինչպես հայտնի է փորձուսուցման ընթացքում ուսանողը հանդես է գալիս ոչ միայն ուսումնախմացական խնդրողացիա հաղորդողի /տեղեկատուի/, այլև դաստիարակողի

դնրում: Ուսուցման բոլոր կողմերի՝ բովանդակության, մեթոդների, կազմակերպման ձևերի, ընձեռած հնարավորություններով նա պետք է լուծի իր սաների հումանիտական դաստիարակության բազմաբնույթ հիմնականները: Ուսուցչը աշակերտներին կարող է տալ, նրանց մեջ դաստիարակել այն, ինչով օժտված է ինքը: Մանկավարժորեն ճիշտ կազմակերպված և վարվող փորձուսուցումը նպաստում է ապագա ուսուցչի գիտական աշխարհայացքի, համոզմունքների, ակտիվ կենսադիրքի ձևավորմանը, նրա մեջ մանկավարժին բնորոշ որակների՝ պրոֆեսիոնալ պարտքի և գիտակցության, արդարացիության, մանկավարժի խղճի, մանկավարժական լավատեսության, տակտի, անկեղծության, փառասիրության, աշակերտների նկատմամբ հոգատար և զգայուն վերաբերմունքի, հաղորդակցման կոլտուրայի և այլնի դաստիարակությանը:

Մանկավարժական փորձուսուցումը կատարում է նաև ակտորոշման /դիսկոստիկական/ գործառնություն: Փորձուսուցման ընթացքում պարզվում է մանկավարժական աշխատանքին ապագա ուսուցչի տեսական և գործնական նախապատրաստվածության աստիճանը, նրա արժեքային կողմնորոշումների բնույթը, տեխնոլոգիայի, վարպետության հիմունքների տիրապետման մակարդակը, այլ կերպ ասած՝ նրա պրոֆեսիոնալ մանկավարժական պիտանիությունը:

Մեզ թվում է, որ փորձուսուցման վերը նշված գործառնություններից բացի հարկ է առանձնացնել նաև նրա կանխատեսման /պրոգնոստիկական/ գործառնություն: Այն հնարավորություն է տալիս նախագծել ուսուցչի անձի մասնագիտական-մանկավարժական ուղղվածության ձևավորման հետագա գործընթացը նախադասական պատրաստման փուլում:

Նշված գործառնությունը հանդիս է գալիս միասնության մեջ, որոնք իրացվում են մանկավարժական փորձուսուցման ողջ բովանդակությամբ և կազմակերպման ձևերով և մեթոդներով:

Մանկավարժական փորձուսուցման հիմնավորման մյուս կարևոր պայմանը, մեր կարծիքով, այն տիպական թերությունների և դժվարությունների բացահայտումն է, որոնք բնորոշ են մանկավարժական կադրեր պատրաստող համալսարանի պրակտիկանտ-ուսանողների աշխատանքին: Մենք վերնում հանգամանորեն դիտարկեցինք այդ թերությունները և դժվարությունները, նշեցինք դրանք կյանքի կոչող հոգեբանական որոշ պատճառներ /արտաքին և ներքին/:

Մեր կարծիքով, նշված և չնշված թերությունների հաղթահարման ուղիներից մեկը անընդմեջ մանկավարժական փորձուսուցման արմատավորումն է համալսարանում ուսանողի ուսումնառության բոլոր տարիների /1-ին կուրսից ընդհուպ 5-րդ կուրս/ ընդգրկմամբ:

Նախկին ՍՍՀՄ հայտնի մանկավարժների՝ Ս.Տ. Շաջկու, Պ.Պ. Բլոնսկու, Ա.Ս. Մակարենկոյի, Գ. Էդիլյանի, Վ.Ա. Սուխոմլինսկու ստեղծագործական ժառանգության վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե նրանք բոլորն էլ առաջադրել են մի ընդհանուր պահանջ՝ ապագա մասնագետի տեսական պատրաստությունը՝ առարկայի, մանկավարժահոգեբանական մասնագիտությունների գծով, մշտապես զուգակցել անընդմեջ և համակարգվածությամբ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների հետ: Այլ կերպ ասած՝ նրանք ապագա մանկավարժի պատրաստման գործը տեսնում են նրանում, որ տեսական կրթությունը և գործնական պատրաստումը զուգակցվեն ներաշնչակորեն, քայլեն գիրկընդգլխան՝ ուսանողի ուսումնառության բոլոր տարիներին: Ապագա մանկավարժի պատրաստման այդ միտումը մենք տեսնում ենք Ա.Ն. Ալեքսյուկի, Յու.Կ. Բաբանսկու, Գ.Է. Գրիշինի, Ն.Վ. Կուլիշնայի, Վ.Ա. Մաստենինի, Օ.Ա. Մեդոլիշնայի, Ա.Ա. Բալյանի, Բ.Մ. Եսաջանյանի, Հ.Մ. Մախչանյանի աշխատություններում:

Նման մոտեցումը պայմանավորված է մանկավարժական աշխատանքի բնությամբ: Սակայն ապագա ուսուցչի պատրաստման փորձուսուցումն դեռևս չի հասել այն մակարդակին, ինչն առանձնապես նկատելի է համալսարանում մանկավարժական փորձուսուցման կազմակերպման գործում, որտեղ շնչոտ դրվում է ուսանողին հիմնաքար տեսական պատրաստություն տալու հիմնախնդրի վրա: Այդ տեսակետի կողմնակիցները թերագնահատում են մանկավարժական փորձուսուցման հնարավորությունները, որը համապատասխան նախապատրաստման և կառավարման դեպքում նպաստում է գիտելիքների թե՛ հիմնավորվածությանը և թե՛ գործունեությանը:

Մեր կարծիքով ճիշտ չէ ուսուցչի պատրաստման գործընթացում գործնական կան տնտեսական պատրաստմանը նախապատվություն տալը: Ապագա մանկավարժի ձևավորման գործում գործնական ու տնտեսական պատրաստությունը պետք է իրագործվի օրգանական միասնության մեջ, որը, իհարկե, չի բացառում մեկի կամ մյուսի տիրապետող լինելը ուսանողի քուսակն ուսումնառության տարբեր շրջաններում: Խոսքը վերաբերում է տնտեսության և պրակտիկայի օրգանական դիալեկտիկական միասնությանը ապագա ուսուցչի պատրաստման ամբողջական համակարգում: Ուսումնառողմն յանկավարժական փորձուսուցման գաղափարը լավագույնս համապատասխանում է ապագա ուսուցչի պրոֆեսիոնալ դաստիարակության, նրա անձի լինելության նկատմամբ նման մոտեցման պահանջի կատարմանը:

Համալսարանի շատ դասախոսներ ճիշտ չեն համարում անընդմեջ մանկավարժական փորձուսուցման վարումը ուսանողի ուսումնառության բոլոր տարիներին: Նրանք գտնում են, որ քանի ուսանողը չի լսել տնտեսական դասընթացները դպրոցի ուսումնադաստիարակական գործընթացների վերաբերյալ, քանի դեռ չի ապահովվել նրա գիտատնտեսական պատրաստությունը, ապա նպատակահարմար չէ, անգամ վնասակար է քուսի ուսանողին դարձող ուղարկելը նա պատրաստ չէ դրան:

Մեր ընդգիմախոսները մոռենում են, որ մանկավարժության, հոգեբանության, մեթոդիկաների, մասնագիտական և հասարակագիտական առարկաների տնտեսական հսկողությունը անհրաժեշտաբար գգում են գնական նյութի, դպրոցական կյանքի «կենդանի խաղաղություն» կարիքը, քանի որ փորձուսուցումն ուղեկցում է իմացության գործընթացին սկզբից մինչև վերջ, որ փորձուսուցումը «կյանք է տալիս տնտեսությանը»:

Եթե ուսանողը /ապագա մանկավարժը/ առաջին կուրսից հաղորդակից է լինում դպրոցական մանկավարժական փորձուսուցման /ինչպես և թժկվել/, ապա դա չի նշանակում, թե նրանից պահանջվում է դաս վարել, կատարել դասողական աշխատանք. կազմակերպել միջոցառումներ ծնողների հետ, նա ակամատես է լինում այդ բոլորին, ինչպես թժկական ինստիտուտի ցածր կուրսների ուսանողի ծնողը չի տրվում վիրահատական գործիքը, նրանից չի պահանջվում աշխտորդել հիվանդին, վիրահատել նրան: Թե՛ առաջինը և թե՛ երկրորդը դիտում են, իմաստավորում են դիտածը, պատկերացում են կազմում դպրոցում /կամ կլինիկայում/ տարվող աշխատանքի, կատարվող գործողությունների մասին: Ուսանողը, ստանալով կենդանի տպավորություններ մանկավարժական ամբողջական գործընթացի վերաբերյալ, ակամատես լինելով ուսումնադաստիարակական խնդիրները լուծման գործընթացին, առավել ակտիվ վերաբերմունք է ցուցաբերում կարդացվող տնտեսական դասընթացների նկատմամբ: Նա գգում է թևավոր առույթ դարձած ճշմարտությունը, որ «ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել» մի կողմից, և համոզվում է նրանում, որ ոչինչ այնքան գործնական չէ, որքան «լավ տնտեսությունը» մյուս կողմից:

Այսպիսով, համալսարանի մանկավարժական բաժիններում ընդգրկված անընդմեջ մանկավարժական փորձուսուցումը միաժամանակ լուծում է մի շարք լուրջ հիմնահարցեր: Նախ՝ գզալորեն բարձրանում է ուսանողների մանկավարժահոգեբանական պատրաստության մակարդակը: Երկրորդ՝ անընդմեջ մանկավարժական փորձուսուցումը նպաստում է ապագա ուսուցչի մասնագիտական գիտակցության, գիտական աշխարհայացքի ձևավորմանը, քանի որ փորձուսուցումը ստեղծում է իրական պայմաններ տնտեսական գիտելիքները ուսումնադաստիարակչական աշխատանքի գործընթացում կիրառելու համար, սովորեցնում է դրանց տալ գիտական գնահատական: Երրորդ՝ անընդմեջ մանկավարժական փորձուսուցումն ստեղծում է հիմնադր հնարավորություն ուսանողների ուսումնաինտագոստական և գիտահնտագոստական քնույթի /ռեֆլեքտ, դասընթացային աշխատանք, զեկնուցում, դիալոգային աշխատանք, ավարտական աշխատանք/ աշխատանքների կատարման համար: Հոգեբանության, մանկավարժության, մեթոդիկաների ամբիւրների գծով անցկացվող գիտական սեմինարները իրենց տրամադրության տակ ստանում են լաբորատորիաներ, որտեղ ուսանողը համալսարանի դասախոսի և դպրոցական ուսուցչի դեկավարությանը կարող է դնել մանկավարժական գիտափորձ:

Չորրորդ՝ մանկավարժական փորձուսուցումը նպաստում է մասնագիտական կարողությունների ձեռքբերմանը, մանկավարժական տեխնիկայի, տեխնոլոգիայի, վարպետության հիմունքների տիրապետմանը:

Հինգերորդ՝ մանկավարժական փորձուսուցման ընթացքում ուսանողը որոշակի հարաբերությունների մեջ է մտնում ոչ միայն իր համակուրսեցի պրակտիկանտ-ուսանողների և աշակերտների հետ, այլև վերջիններիս ծնողների հետ, դպրոցի ուսուցիչների, ղեկավարության հետ՝ մի կողմից և փորձուսուցումը ղեկավարող մեթոդիստի, հոգեբանի, մանկավարժի և այլն ամբիոնների ներկայացուցիչների հետ՝ մյուս կողմից: Այդ միջանձնային բազմապիսի հարաբերությունները որոշ պահանջներ են ներկայացնում ուսանող-պրակտիկանտին, ազդում նրա՝ որպես մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակից անձի, վարքագծի վրա և նպաստում ապագա մանկավարժի թե՛ իբրև մարդու, թե՛ որպես քաղաքացու բարոյագեղագիտական և քաղաքացիական որոշակի որակներ կրող անձնավորության ձևավորմանը:

## Ամփոփում

Գիտական հոգիվածում փորձ է արվել տալու համալսարանական մանկավարժների պատրաստման առանձնահատկությունների վերլուծությունը, ի հայտ բերելու ուսուցչի անձի ձևավորման ժամանակակից առաջատար մեթոդները, վեր հանելու ապագա ուսուցիչ-դաստիարակի ձևավորման հնարավորություններն ու առանձնահատկությունները՝ շարունակական մանկավարժական փորձուսուցման միջոցով, բացահայտելու մանկավարժական փորձուսուցման օպտիմալացման ուղիներն ու միջոցները համալսարանական կրթության պայմաններում:

Հետազոտության բովանդակությունը մանկավարժական համակարգի այն կազմակերպական, բովանդակային, գործառնային և մեթոդական հիմունքների որոնման է, որոնք կնպաստեն համալսարանի ուսանողի՝ ապագա ուսուցչի տնտեսական և գործնական պատրաստման օպտիմալ զարգացման մանկավարժական մեխանիզմի յուրացմանը:

## Резюме

В данной научной статье предпринята попытка исследования особенностей подготовки педагогических кадров в условиях университета. В ходе исследования были выявлены современные методы формирования личности учителя, а также возможности и особенности становления будущего учителя-воспитателя посредством педагогической практики.

Суть данного исследования заключается в поисках тех методических основ, которые способствовали бы оптимальному развитию путей и средств педагогического механизма теоретической и практической подготовки студентов университета как будущего учителя.

## Գրականություն

1. Հ. Մ. Մախչանյան, Հանուն ուսուցման բարձր որակի, Ե., 1986թ.:
2. Ա. Ա. Բալյան, Մանկավարժական վարպետության հիմունքներ, Ե., 1988թ.:
3. Լ. Զյուրքյան, Պրոֆեսիոնալ ուղղվածության առանձնահատկությունը, Ե., 1989թ.:
4. Ա. Լ. Բադալյան, Ուսանողի պրոֆեսիոնալ ուղղվածության ձևավորումը մանկավարժական Բուհում, Ե., 1990թ.:
5. Օ. Ա. Աբրուխինա, Ուսուցչի համամանկավարժական պատրաստումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում, Մ., 1990թ.:
6. Վ. Ա. Սլաստին, Ուսուցչի անձի ձևավորումը պրոֆեսիոնալ պատրաստման գործընթացում, Մ., 1990թ.:
7. Ն. Վ. Կուզմինա, Մանկավարժական գործունեության հոգեբանությունը, Մ., 1990թ.:
8. О. А. Абыдулина, Педагогическая практика студентов М., 1989г.



# ՀԱՅԲԵՆԱՊԱՏՈՒՄ ԿԱՐՈՏԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ

(Հ. ՇԻՐԱԶԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ/)

Ս.Ա. Խանյան

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Հայ գրականության մեջ դարերի ընթացքում առանձնահատուկ տեղ է գրավել հայրենասիրական պոեզիան: Որպես հայրենիքի ճակատագրի գեղարվեստական վավերագրություն, այն կուտակել է ստեղծագործական հարուստ ավանդույթներ, որը շարունակվել է նաև 20-րդ դարի երկրորդ կեսի հայ բանաստեղծության մեջ:

Անհատի պաշտամունքի քննադատությունից հետո բանաստեղծներն իրենց ստեղծագործությունների պատկերասրահի հյուսվածքների մեջ առան մեր ժողովրդի պատմական անցյալը, նրա հերոսական և ողբերգական էջերը, հողովեցին հայրենյի օջախը, մանկության անմոռանալի վայրերը: Գրվեցին բանաստեղծական շարքեր, պոեմներ, բալլադներ՝ նվիրված ժողովրդի անվանի գավակների սիրահաններին ու մեծագործություններին, նրա նորոգյա հույսերին ու գալիքին: Նորագույն շրջանի հայրենասիրական պոեզիայի հարստացմանը իրենց նպաստներն են բերել համայնա բոլոր բանաստեղծները: Նրանք փառաբանելով հետպատերազմյան վերականգնման շրջանի պայթյուն, միաժամանակ արծարծեցին հարազատ ժողովրդի ազգային ճակատագիրը՝ ցավով հիշելով 1915-ի եղեռնը, կորուսյալ հայրենիքի անանցանելի պատկերը: Մակայն պետք է նշել, որ հետպատերազմյան շրջանում միանգամից չազատվեցին մինչև այդ արմատներ նետած գեներիկ հասարակարանության կաղապարներից ու գաղափարախոսությունից: Լավն այն է, որ սառույցն արդեն փշրվել էր: Բանաստեղծական դիմադրությունն աստիճանաբար տալիս էր իր առողջ պոետիզմը: Հայրենասիրատուրը ձեռք էր բերում նոր որակ: Այդ տարիների հայրենասպասումի մեջ իրենց ինքնատիպ նրանցներն են հյուսում Հ.Շիրազը, Հ.Մախանը, Պ.Մաակը, Վ.Դավթյանը, Գ.Էմիրը, Մ.Կապուսիկյանը, Հ.Հովհաննիսյանը, Մ.Մարգարյանը և ապա բանաստեղծական նոր սերունդը:

Հ.Շիրազի ստեղծագործական մտահղացումների մեջ հայրենիքի մոտիվը ամենից ընդգծվածն ու փայլունն է: Հայրենասիրությունը նրա հուզաշխարհի և ձեռագրի գլխավոր նրակն է և հենց առաջին քայլերից սկսած տարբերվում էր իր գրչակից Ժամանակակիցներից: Վերածնված փորրիկ Հայաստանի պատկերը մի կողմից, կորուսյալ Մեծ Հայքի ցավը՝ մյուս, միասնաբար կազմել են նրա նախասիրած խորհրդանշանային արվեստի հիմնական սկզբունքը: Մթն իր պոետական քայլերի առաջին շրջանում Շիրազը որոշ դեպքերում դիմում էր վերացական գովերբի, ապա գնալով, ինչքան էլ որ նրան քննադատում էին այսպես կոչված «մասիսերգության» չարաշահման համար, նա ամուր ոտքերով կանգնում էր հայրենիքի առարկայական ոլորտի հենքի վրա և ստեղծում նրա բազմաշերտ, բազմապլան պատկերակերպը: Խորհրդային Հայաստանում տեղի ունեցող վերափոխումների նկարագրության հյուսվածքի հետ նա անընդմեջ անդրադառնում էր հայ ժողովրդի պատմությանը՝ առասպելական շրջանից մինչև 20-րդ դարի սկիզբը, մինչև մեծ եղեռնը՝ մեր համագային անանցանելի ցավը: Շիրազի բանաստեղծական-քաղաքացիական խոր ու երկշերտ ապրումը հասկանալու համար բավական է բերել նրա հետևյալ խոստովանությունը.

Մի աչքս Սևան,  
Մեկս՝ Վանա ծով,  
Ու կյանքս անցավ  
Միժող ու լացով:

Շիրազի հայրենասիրական երգերը ծնված են նրա չափացող վերքերից: Այս առումով նուշարենցյան շրջանի ամենագայուն և ճշմարիտ մարգարեն Շիրազն է: Անգամ այն պահերին, երբ նա ի լուր աշխարհի հայտարարել է, որ «նոր հուն է մտել մեր ճանապարհը», երբ սփյուռքահայերի առաջին վերադարձի առիթով բացականչել է. «ճամփաները բացվեցին, էլի գարուն է բացվում, էլի ծովը ծիրանի կյանքի դրոշմ է պարզում», միևնույն է, նա ընդգծել է. «Հայաց վերքերից ծնված երգերը Արդող են ինչպես հայոց վերքերը»: Եվ մեծատաղանդ բանաստեղծը մեր արնոտ վերքերի հետ կապել է նաև հայոց խրոխտ երգերը և ընդգծել, որ եթե նույնիսկ անցնեն հայոց վերքերը, ապա »անանց են վերքերից ծնված երգերը:

Երբազը չէր ընդունում այն «քննադատներին», ովքեր նրան քարկոծում էին ազգային վշտի հաճախակի ընդգծման մեջ և ձգտում էին համոզել, որ ցավի ընդգծումը թնաքափ է աւնում նոր սնրուղիներին: Նա ընդհակառակն էր ապացուցում:

Հայոց նրզներ՝ ամբողջ նրզներ՝  
Բալասանում են հայոց վերքերը:  
Հայոց նրզները, նրբ խոլ փոթորկնե  
Վագրի ու մահվան նրախ կիսակվեն:  
Կթանան ճառփեն նրկրի մասիսված, -  
Դենդի ավետյաց աշխարհ իմ կիսված: <sup>2</sup>

Պատմական անցյալը գրողի նրզերում ծածանվում է որպես կարոտի զգացում: Բայց դա կարոտի սովորական զգացում չէ, միամիտ կարոտախառ չէ և ոչ էլ մանկության և պատանեկության հուշերի ծփանք, այլ հայրենիքի կորստի մշտաձողով ցավ է, որ հայ սնրունդներին է անցնում մոր կաթի հետ և վերածվում աղբյան կանչի: Երբազն այդ կորստի ցավի հասցեները նշում է մեկ առ մեկ: Կորուսյալ հայրենիքի բոլոր սարերն ու գետերը, ձորերն ու հովիտները, քաղաքներն ու ավանները բանաստեղծի մոտ հանդես է բերված որպես աշխարհագրական-պատմական խորհրդանշանների ամբողջական համակարգ: Այդ համակարգի ողնաշարը Հայոց լեռնաշարն է, իսկ պարագլուխը՝ Մասիսը: Մասիսը վշտից քարացել է՝ լսելով «հայոց եղենի մասին»: Մասիսը Հայոց լեռնաշարի «պարբաշին» էր, նրա ձեռքին ճերմակ թաշկինակն էր, որ մեծ եղենի ժամանակ ձեռքից ընկավ գլխին և հավերժացավ: Սակայն վշտի հավերժական այդ գոյությունը հայի նրզների մեջ հավերժական չափեր է մնա: Բանաստեղծը յուրաքանչյուր անգամ ձեռք է մեկնում հույսի փնջերին և ընդգծում. «Կլքվի դարը ամենայն չարից ու մեք կպարենք սուրբ հարսանիքով Մասիսի վրա, հայոց քոչարի...»:

Հժիրագի հայրենասիրական բոլոր ստեղծագործությունների մեկնակետը պատմական Հայաստանի կորուստն է: Լավ հասկանալով շիրազյան այս միտումը, որոշ «քննադատներ» կամա թե՛ ակամա, խորհուրդ են տվել բանաստեղծին նրզել միայն նորը, դրա տակ հասկանալով Երևանի, Արագածի և Մանի գովքը: Արարատին նրզակելը հասարակում էր անհասանելի ձգտում և խորհուրդ էր տրվում թողնել «մթնավեր Դարսն ու Անին... վիրավոր վանք» և նրզել «Արև... Երևանը», որ իբրև «ժին ռոբը նոր վարդին» չի սազում, որ հեռու արդեն մնում է, որ պետք է «նորը նրզել», որ պաշտեն իրեն: Երբազը, սակայն, կրկնում էր իր բաղձաբքը: Նա իր հոգու պոետական բառարանի մեջ փայփայած ունի հայրենասիրական իր պատգամը, որ վերածվել էր նաև շիրազյան հոգեբանության և հավատամքի:

Ի՞նչ են անում պաշտամունքը, երբ չեն հիշում Անին,  
Երբ կարոտ է յոթն ակունքը իմ մայր Երևանին:  
Ծաղկում է նոր Երևանը, ձեզնից լավ նմ տնեսում,  
Բայց բանտում է իր բոլոր վանք, մրմունջն է ինձ հասնում:  
Մայրն՝ ազատված որդու համար՝ սրտով է ծափ տալիս,  
Բայց բանտավածին հիշում՝ հազար սրտով է միշտ լալիս: <sup>3</sup>

(«Բանաստեղծի բողոքը»):

Բանաստեղծը մոր կարոտով ու ցավով հիշեցնում է, որ իր վանք, Սփիանք, Անին, Մուշք, Դարսը, Տարսը, Մասիսը բանտված են: Նա ընդունում է, որ Երևանը՝ միակ հույսն է ազգի: Սակայն Երևանի կողքին »գնրի է հողն անասանան«, ուստի բացում է իր նպատակի էջը:

Ես ուզում եմ ազատ լինեն որդիք իմ հարազատ,  
Յոթն էլ՝ մեկին յոթը ծնեն՝ Հայաստանով ազատ:  
Մեծ Մասիսը գանգ է վսեմ, ես իր լեզվակն նմ Միս,  
Պիտի ցմառ գանգահարեն՝ ազատեն հողն ազգիս: <sup>4</sup>

Ինչպես նկատում ենք Երբագի կարոտը ակտիվ և նպատակամետ է: Բանաստեղծը հավատացած է, որ Արտավազդ արքան »շղթաները փշրն պիտի«, «Որ դառնա ձյունն Արարատի թագն իմ հավերժական»: Երբագի ցավից ծնված կարոտից ծնվում է հույսը, որից էլ շափաղվում են բանաստեղծի վճռականությունը, հավատը, նրազը:

Հայաստանս կմեռնա, սուտված ինքն է տալիք,  
Վանա ծովից մինչ Սևանս՝ ծովից ծովով գալիք,  
Թանգի նա լոկ նա չէ, ողբ իմ ազգն է վսեմ,  
Այս կողմ կգա Մասիսն էլ վեն՝ մեռած տնդս էլ կասնմ:  
Արարատս ծով էլ սուզնը՝ հայ սրտից չեք հանի,  
Չէ, կազատվի Մասիսն էլ սեզ՝ վաղվա Հայաստանի: <sup>5</sup>

(«Բանաստեղծի բողոքը»):

Այստեղ հարկ է բերել Ավ.Իսահակյանի գնահատականը. «Հիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է»: Վարպետի այս դիտարկումը Հիրազյան հայրենասիրական քննդատմանը մեկնաբանելու բանալի է: Ասում են ցավ ունեցող շատախոս է դառնում: Առածն առած: Բայց ընդգծենք, որ Հիրազի շատախոսությունը՝ կազմված համագգային ցավի հետ, միշտ եղել է անձանձիր: Տարբեր առիթներով, տարբեր թեմաներ շոշափելիս մեծ բանաստեղծը չի կարողացել շրջանցել այդ ցավը: Եվ դա համագգային վշտի ցցուն արտահայտություն չի եղել, այլ եղեռնված մայր ժողովրդի ցավի զգացումը նաև իր սեփական կաշվի վրա: Չմոռանանք, որ Հիրազի բոստանչի հորը իր դեան մոտ սրվախողտը են արել թուրքները: Չմոռանանք նաև ապագա բանաստեղծի տառապանքը որբանոցներում: Հիրազի անձնական ճակատագիրը իր ժողովրդի ճակատագրի առնվազնային է: Եվ աստվածատուր բանաստեղծը երբեք չէր կարող ինքն իրենից հեռանալ, մոռանալ ինքն իրեն և կեղծիքի ծխածածկույթով իրեն օրորել «երջանկության» դափնիների վրա: Նա բանաստեղծ էր ի ծնե, նա ազնիվ քարտուղարն էր ոչ թե աստծո, այլ իր ժողովրդի, որի սիրտը կիսել են դարավոր թշնամիները՝ թուրքերը: Իսկ թուրքամետ բռնիկ-ղեկավարները քառատել են փողոկի Հայաստանը՝ Մայր Արաքսը դարձնելով ժողովրդական վշտի ոչ թե սահման, այլ սիրտն ակօսող փշառեսը: Եվ Հիրազի՝ բնության, սիրո, մայրական, հայրական, խոհական-փիլիսոփայական երգերի մեջ համագգային վշտին անդրադառնալը իրեն հարազատ մնալու վկայությունն է: Համագգային ցավի շիրազյան ընդգծումները աննկատելի հյուսված են նրա տարաբնույթ խոհերին ու ապրումներին: Այդ տմայկության արժեքն էլ ենք համարում «Քնար սիրո» շարքի «ժողագիրը խորքում» սիրային բանաստեղծությունը: Հիրազը պոետական ինքնատիպ ու հայտնու պատկերներով փառաբանում է սիրո ծովում «Չնաշխարհիկ մի կույս»-ի որ «Ասևա Շուշանակուրծք, մարդու եթեր ու քույր» է, և տնչում է, որ իրեն մեծակ չթողնի... Բանաստեղծության սկզբնատառերը հուշում է արքունիքում՝ շիրազաբնույթ, շիրազաբնույթ, շիրազապատում. «Մոնչա Հիրազ ազատություն Մասիսին»: Նույնիսկ «Էլ ո՞ւմ համար են նոները կրծքիդ» տողով սկսվող բանաստեղծության մեջ սիրո հեթանոսական զգացումին անբռնաբեր ծուլված է կորուսյալ հայրենիքի կարոտը: Բանաստեղծը դիմում է սիրած էակին. «Բաց կուրծքը կոկոն, որ դեմա բանա ճուխ այգեստաններն իմ հեռու: Վաճա, գեթ մի զույգ խնձորն իմ Արտամեծ...», իսկ «Բեզ՝ քո հայադեղ հոնքերի համար» գոգտրիկ երգի մեջ բանաստեղծը սիրո օբյեկտին նվիրել է բերում հայրենի «յոթնականար վանքերը», «ձրոխտ Արարատ լեռները»: «Ես կուզեմ...» սիրո նրագագույն բանաստեղծության մեջ Հիրազը գեղուհուն համեմատում է Սևանի հետ և տնչում, որ միշտ մենար մոտը՝ իր ցավը կիսելու համար.

Մոտս մնար՝ սրտիս պես խոր,  
Երազում էլ ինձ կանչեր,  
Ինքն էլ ինձ պես՝ գիշեր ու գոր  
Հայոց ցավով հառաչեր:<sup>6</sup>

(«Ես կուզեմ...»):

Հայրենիքի կորստյան անանցանելի ցավը մեկնակետային ընթացք է ստանում նաև «Քնար բնության» շարքում: Դիմելով բազմաբանգ վարդերին, ընդգծելով բնությունը զարդարող նրանց հատկությունը, Հիրազը կրկին ծնորդ դնում է ցավող սրտին և ընդհանրացնում.

Կարմիր վարդերը դեղին ծնեցին,  
Աշխարհը դեղին վարդերով լցվեց.  
Դեղին փշերը վեր սփռվեցին,  
Եվ... Ամենից խոր՝ իմ ազգը խոցվեց...<sup>7</sup>

(«Դեղին ծաղիկներ...»):

Խոցված ազգի խոր ցավը ընդգծված է նաև «Քնար համամարդկային» շարքի բանաստեղծություններում: Նշելով հայ ժողովրդի ազնիվ ծառայությունը մարդկությանը, Հիրազը չի սրողում այն անտարբերությունը, որ ցուցաբերեց հզորների աշխարհի հայ ժողովրդի հանդեպ: Քնարական հեռու-բանաստեղծը իր ժողովրդի անունից թվարկում է այն բարեմասնությունները, որ հատուկ են նրան. «կապեցի վերքն ամենիդ...», «լքյալին փրկեցի», «ճամփա եղա ամենքին», «անհույսին հույս հերկեցի». Ես հազար լուծ քաշեցի, իմս ոչ որ քաշեց,

Ես մայր եղա ամենքին, ամենքիդ մեջ որբացա,  
Հայոց վիշտն էլ իմ հույսը աշխարհով մեկ մշուշեց՝  
Ես դեռ ջահել ծերացա:

(«Մայրիկ...»):

Ձրույց բացելով ազգերի հետ, Հիրազը անմիջական զգացումների շրջանակներում ներկայացնում է բանաստեղծական իր հայաբնույթ ազնիվ վերաբերմունքը և միաժամանակ

արտահայտում իր դժգոհությունը՝ նշելով հայ ժողովրդի կրած տառապանքից՝ կոնկրետ այս կամ այն ազգային պետությունների պատճառով: Այսպես, «Իմ մատյանները գրքերն իմաստուն» տոգով սկսվող բանաստեղծությունը ձևավորվել է Անմահ Շնքալիիին: Երախտիքի ժփանքներով արտահայտվելով իր սննդ գրողի հաղեղեպ, նրկապագությունը՝ նրա վանել հանձնարին, Շիրազը միաժամանակ ընդգծում է իր խռովը, նկատել ունենալով Անգլիայի կառավարության հակահայկական հայտնի արարքը 1878 թվականին.

Ես քեզ իմ խնկում, ոչ ազգիդ գահը,  
Շոք մեր դռանը չքոց սև մահը՝  
Գահը քրքջաց թե՛ «Նավերը մեր  
Չեն կարող եղևել Արարատն ի վեր...»<sup>9</sup>

Հետևանքը եղավ այն, որ «մենավ մնաց իմ հայոց ազգը... Եվ մեզ եղևինք յաջագանը սև,  
- Խլեց մեր հոգն էլ աստվածապարզ», - ավելացնում է բանաստեղծը:

Շոք ունանց թվա էլ, թե՛ գիտական աշխատանքի հետ կապ չունի այն փաստը, որ ցանկանում եմ քերել, ապա, գտնում եմ, որ սխալվում եմ: Դեպքը տեղի է ունեցել 1998 թ. աշնանը Արցախի պետական համալսարանում հասարակական հայտնի գործիչ, հայ ժողովրդի մեծ քաղաքական, Անգլիայի Լորդների պալատի փոխխոսնակ Բ.Քոքսի հետ ունեցած հանդիպման ժամանակ: Հինք ընդունելով Բ.Քոքսի նյութական մեծ օգնությունը ԼՂ հանրապետությանը, ինչպես նաև Արցախի պետական համալսարանին, նրա ընկալողական և գիտական խորքի նախագահությամբ Բ.Քոքսին շնորհվել է պատվավոր պրոֆեսորի կոչում: Հանդիպման ժամանակ իր անկեղծ և խորին շնորհակալությունը հայտնելով կրթօջայի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին և անձամբ ընկալողական, Քոքսը վերջում խնդրել է ներկաներին հուզող հարցերով դիմել իրեն: Հարցերից մեկը հետևյալն էր. «Մենք բարձր ենք գնահատում Ձեր անձնական ծառայությունն ու օգնությունը Արցախին, սակայն է թե՛ հայ ժողովրդին: Բայց Ձեզ հայտնի՞ է, թե՛ ինչպես Անգլիայի կառավարությունը տարեկան տաս միլիոն դոլարի օգնություն է հասցնում Ադրբեյջանին, այն դեպքում, նրա Ադրբեյջանի կառավարող շրջանները 10 տարուց ավելի է, ինչ շրջափակման մեջ են պահում և Լեռնային Ղարաբաղը, և՛ Հայաստանը»: Բ.Քոքսը պատասխանել է. «Տեղիք եմ և այդ կապակցությամբ բողոքով դիմել եմ Անգլիայի կառավարությանը: Պատասխանել եմ, որ իրենց առաջին հերթին հետաքրքրում է նավթի շահը, այլ ոչ թե՛ Լեռնային Ղարաբաղը: - Իսկ ես, - ընդգծել է Քոքսը, - նրանց նրևին չպրոքել եմ իմ գայրությունը: Ամաշում եմ ձեր փոխարեն, Անգլիայի կառավարչներ: Իմացքը, որ ես պատկերտ պիտի շարունակեմ պայքարը հանուն արդարության, հանուն ԼՂ հանրապետության միջազգային ճանաչման»:

ՀՇիրազը տասնամյակների խորքում ասես կաշին է վ.Շնքալիի և Ջ.Բայրոնի ժառանգորդին՝ Բ.Քոքսին, ծխածնելով իր բանաստեղծական պրոք, ճշմարիտ խոսքը: »Որք Խայամակեր» բանաստեղծության հյուսվածքում պարսիկ դասական պոեզիայի հսկաներից մեկի՝ Օմար Խայամի հաղեղեպ արտահայտած հարգանքի տոգրի հետ մեկտեղ ՀՇիրազը դարձրել է անդրադառնում է կորուսյալ հայրենիքի պատկերներին՝ Արազին, Մասիսին, ժխտում աշխարհավեր պատերազմները, հաստատում բարության հաղթանակը և Խայամի շրթերով հենցնում իր երազը, «Շիրազ, երբ պիտի Մասիս բարձրանանք»:

ՀՇիրազը ազգային վշտի և ցավի զգացողությանը իր ստեղծագործական բոլոր էտալներում շարունակել է հարստացնել իր հայրենապատումը: Նրա հոգու մեջ ասես միշտ արձագանքել է Մեծն Չարենիքի ընդհանրացումը. «Քանի կա լյան Արարատ և քանի աշխարհում դու կա, զգվար թե՛ ցամաքն երբեք ալուրներն թո ջինջ երգելի»: ՀՇիրազի երգերը արվեստի տեսակներից ջինջ են, սակայն արարատված-ցաված են, ըմբոստ-տառապած, վշտոտ-հուսավառ: Արարատացավով՝ կորուսյալ հայրենիքի կարոտով հյուսված նրա երգերը հավերժապես ու հավերժաժուր են: Այդ ցավն ու կարոտը ծնվել են Շիրազի սրտում՝ մորից: Եվ ստեղծագործական իր առաջին քայլերից սկսած այդ զգացումը կազմել է նրա երգերի հիմնական առանցքը... Դեռես երիտասարդ տարիքում գրած նրա խոհա-փրկիստփայական մտորումներում բնության հավերժության, մարդու և բնության կապի, տիեզերքի առնձնաժամների, մոր, սիրո և այլ նախասիրությունների վերաբերյալ, հայրենիքի մոտիվը ընդգծված երանց է կազմել: Դրա խոստում վկայությունը «Ինչպես երեք աստղեր անշնջ՝ որդակի ծրագրային բանաստեղծություն է.

Ինչպես երեք աստղեր անշնջ՝  
Երեք սնր կա իմ հոգու մեջ,  
Ասի սիրած իմ աղջկան,  
Եվ նա տխրեց ամպի նման:  
«Մի կապակցում,-ասի նրան,-  
Դու ես իմ սնրն, իմ անմահն,-



Ես սիրում եմ, վկա հոգիս,  
Քեզ, մայրիկիս,  
Հայրենիքիս...»<sup>10</sup>

Հ.Շիրազը իրեն դրսևորել է որպես հայրենասիրական երգերի փայլուն հեղինակ: Երկար տարիներ, այժմ էլ, դարձրեցին հայաստանցիներում, քրեատմատիկաներում՝ զետեղվում են նրա «Ո՛րն է, քաբո...», «Ո՛րն է, տղա...», «Արձան Արծվանի» և այլ բանաստեղծություններ: Շիրազի երգերում քնարական հնրուքը և հայրենիքը միաձուլվում են որպես պատկերային համակարգ: Այն հուզու ճիշ, արյան կանչ է: Բոլոր դեպքերում քնարական հերոսին հատուկ է Մասիսի վնասությունը: Բանաստեղծի «Դավթի թռչները», «Իմ Հայաստան», «Երկիր Նաիրի», «Հայ ժողովրդին» և այլ երգերում արտացոլված են հայ ժողովրդի հերոսական անցյալը, նրա ողբերգական էջերը, հնդկած արյունից ծնված հուսալի մեծագույնն ու հավատը: Հիշտ է, պատերազմական թռի ու բռնի պատկերումը այդ բանաստեղծություններում բացակայում են, սակայն բանաստեղծի խոհերն ու մտորումները՝ առնչված հայրենիքի և ժողովրդի ճակատագրի հետ, երևում են վառ կերպով: Հազարամյա և նորոգյա Արարատի կերպարը դառնում է ոգի և կանչ՝ ուղղված ներկա և գալիք սերունդներին («Երբ նայում եմ լեռնապահին», «Արարատ»): Շիրազի հայրենասիրական քնարերգությունը ընդգծվում է բանաստեղծական ինքնատիպ երանգով և հնչեղությամբ: Ընդհանրության մեջ դրանք ռազմերգության հատկանիշներ ունեն: Դա վերաբերում է նաև բանաստեղծի բալլադների և լեգենդներին, որոնց շարքում առանձնանում են «Չինգիզ խանի չար և փառատուր...» լեգենդը, «Աշխարհակալի վերջը» բալլադը: Դաժան Չինգիզ խանի և հոների արքա Կանդ Աթիլայի կերպարում Շիրազը դատարկեցնում է հայ ժողովրդի հին ու նոր թշնամիներին: Հոների արքա Աթիլան խմելով՝ «արյունը հյուսիս, հարավի» ոտնատակ տալով արևելքը, Կանդաժարավ խուժեց Արևմուտք, հորիզոնից-հորիզոն ավերեց, «Քիչ մնաց՝ մահն էլ դարձնել գերին»: Սակայն նրա սիրտը մարդկային արյունից չի հազնում: Նա դիմում է շամանին, խմանալու պատճառը, վերջինս պատասխանում է.

- Սրիգ է, արքա,  
Քո սրին արյան հագնեցում չկա:  
Իր շուրջը արյունն ինչքան ծովանում  
Դու չէ, քո սուրն է, որ չի հովանում,  
Եվ չի կշտանա ծարավը դժնայ,  
Ով աշխարհակալ, չէ, չի հագնեա:

Աթիլայի հարցապնդումներից հետո շամանը խորհուրդ է տալիս վեր նետել սուրը և օղում բռնել: Աթիլան ծածագում է շամանի խորհրդի վրա և նոր նետում սուրը: Տնդի է ունենում արժանին.

Սուրը վեր թռավ  
Ու վար սլացավ՝  
Մխրճվեց գլխի մեջ Աթիլայի,  
Դարձած աստղծ օրհնանքը վրդից,  
Մխրճվեց գլխին և թյուր ազգերից  
Խմած արյունը թափվեց, ծովացավ,  
Սատկեց վիշապը և ... սուրն հովացավ:

Բանաստեղծը կատարում է ժողովրդի կենսափոքրից ծնված ընդհանրացումը.

Ճակատագիրն է այս թուրն ահա՜,  
Ամեն մի ահելը աշխարհակալի...

Շիրազի հայրենասիրական երգերին հատուկ է լավատեսական ավարտը: Դա բխում է հերոսի և հայրենիքի ներդաշնակությունից, նրանց ճակատագրերի համաձուլվածքից, նույնությունից: Բանաստեղծի երգերում ինչքան ալիքվում են թախիծը, հառաչանքը, ողբերգական շունչը, փնհուն է, դրանք ավարտվում են հայրենիքի հավերժության, ժողովրդի անմահության ծածանումով.

Մեզ են գլխից են գարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Հազար դարեր են գարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Եղեռնագարկ էլ եղանք, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:<sup>12</sup>

(«Հայոց ճակատագիր»):

Խոսելով հայ պոեզիայի հայրենասիրական երգերի մշտական առկայության մասին, ընդգծելով Շիրազի հայրենասիրական առնչություններն այդ թեմային, գրականագետ Ս.Աթաբեկյանը նկատել է. «Եթե նախահեղափոխական հայ բանաստեղծը տառապում էր մայր

հողի, ժողովրդի քաղաքական բախտի համար և հիմնականում ստիպված էր հնչեցնել արցունքի և արյան երգեր՝ դրամատիկ կամ ողբերգական կացության մեջ գծելով ցանկալի հայրենիքի պատկերը, ապա նորագույն բանաստեղծը, մասնավորապես՝ Շիրազը, իրեն բնորոշ տաղանդով ու նվիրվածությամբ ստեղծում է երկրի ու նրա զավակի կենսագրության նույնությունը: Հոգեբանական առումով շատ հասկանալի է նրա վիճակը, բանաստեղծը հասակ է նետել իր նոր հայրենիքի հետ, նրանք համարյա տարեկիցներ են: Նոր իրականությունը բանաստեղծին քարձբացել է հատկապես, լիցքավորել նրա ուժերը, շտկել նրա ճանապարհը»<sup>14</sup>:

Կարելի է համաձայնվել գրականագետի այս մտքին, սակայն միաժամանակ ավելացնել, որ նորագույն շրջանի պոետ Շիրազի, և ոչ միայն նրա, հայրենասիրական երգերի մեջ ցանկալի հայրենիքի պատկերը ամբողջական չէ, որովհետև հորիզոնային Հայաստանը հայի ավանդական-պատմական հայրենիքի մեկ-տասներորդ մասն է միայն, սնացվալը թշնամիների կողմից խլված հորիզոններ են, եղեռնված ժողովրդի հոգիների առկայությամբ: Ուստի փրկված փոքրիկ հողակտոր-Հայաստանը հայի հույսի մի փոքրիկ առկայծումն է, իսկ ցանկալին՝ կորույսյալ հայրենիքի վերագտնումն ու վերադարձն է, ինչպես Շիրազն է ասում.

Ես վաճ կանամ՝ դու հասկացիր  
Հոգն ու ծովը մեր վանա,  
Սասնա Դավիթն ու մեր անձիք  
Ողջ սարերը Միփանա...

Այս, ե՞րբ պիտի վշտից գատվի  
Ողջ Հայաստանն հավիտյան...<sup>14</sup>

(«Վաճն է դրախտով հայոց հողի»):

Հ.Շիրազի հայրենապատումը մի կողմից փրկված հայրենիքի հուսո ժպիտ է, մյուս կողմից՝ կորույսյալի տագնապած կանչը, որպես որդու նրազանք, մոր աղոթք, հոր պատգամ, համագգային ցավ ու հույս... Այս զգացումը երգից երգ, պոեմից-պոեմ բանաստեղծական նոր երանգներ են ձեռք բերել: Նրա խոհերն ու մտորումները անդադար պատվել են մայր հայրենիքի պատմության, ժողովրդի ճակատագրի շուրջը, նրա հարուստ ժառանգության մեջ առաջին հերթին Հայաստանի դիմանկարն է: Այս առումով ճիշտ է նկատել անվանի գրականագետ Ժ.Թադևոսյանը. «Հ.Շիրազը գրում է բանաստեղծություններ Հայաստանի մասին, գրում է նաև սիրո, բնության ու զահեկության պայծառ երգեր: Ինչո՞ւ մեկը հայրենիք է, իսկ մյուսը սոսկ անձնական-սիրային պոեզիա, չէ՞ որ ամբողջի մեջ է ստեղծվում հայրենիքի պատկերը, նրա գեղեցկությունը և նրա մարդու հոգեկան հարստությունը»<sup>15</sup>:

Իսկապես, Շիրազի տարբեր թեմաներով գրված շարքերում հայրենիքի պատկերի ֆոնի վրա է հասնում մոր կերպարը, արևում սերը, ծիսում բնության ջազմորանց խոր: Դրա վառ օրինակ են հանդիսանում «Ծիածանների քարերը վրան», «Երբ իմ սիրո լեզուն բացվի», «Միդո տոնեղ», «Երբ գրկում ես զարնան մի ծիլ իմ որդուն», «Մարված թռչնի տունն անձայն», «Օ, իմ ոսկն մանկություն» և այլն: Հ.Շիրազի հայրենապատումի յուրօրինակ երանգները ծիածանվել են դեռևս Հայրենական պատերազմի տարիներին: Սրտում ու հոգում կրելով իր ժողովրդի անցյալում կրած կորուստներն ու տառապանքները, ոտքերի տակ ունենալով փրկված փոքրիկ Հայաստանը, բանաստեղծն ակնկալել է խորհրդային ժողովուրդների հաղթանակը, դրա մեջ տնսնելով վերածնված երկրի մագնիսական ուժը՝ հետագայում աշխարհասփյուռ հայությունը իր շուրջը համախմբելու ակնկալությամբ: Դրանով պետք է բացատրել այդ ժամանակահատվածի երգերում պատկերված մեր լեռների վեհությունը, բնության քնքշությունը, ազգային հպարտությունը, անպարտելիությունը հավաքող: Վկան Շիրազի հայտնի վեպտողան, որ մեծ բանաստեղծն անվանել է պոեմ.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:  
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես ռոնացիք վայրագ:  
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,  
Դուք հողմերի պես կիզվոք վայրագ:<sup>16</sup>

(«Էքսպրոստ»)

Դժվար չէ նկատել, որ խորհրդային բոլոր ժողովուրդների համընդհանուր ուժերով նվաճված հաղթանակը Շիրազը ներկայացնում է հայոց լեռնաշխարհի պատկերալին ֆոնի վրա: Այդ երևույթը ժամանակակից նկատել է Մ.Ծախիսյանը. «Հայրենական պատերազմը, - գրել է նա, - մեկը նորովի իմաստավորելու հայրենիքի զգացումը, ոչ թե «ընդհանրապես» վերագրված հայրենիք... այլ իր երկրի այն կոնկրետ, որ մանրամասներով թանկ այն անկյունը, որտեղ աշխատել ես, հստակ ասել, սովորել, սիրել, թողել մորդ ու սիրելիներդ»<sup>17</sup>:

Այդ նշանակում է, որ Մեծ Հայրենականի տարիներին հայրենի երկրի, նրա պատմության, ներկայի հետ ավելի սերտորեն է կապվել պոեզիան, բանաստեղծները ընդհանուրի մասին, հզոր ուժի առկայության վերաբերյալ խոսել են կոնկրետ պատկերների միջոցով՝ հյուսվածքի մեջ ներառնելով հայրենի հարազատ բնությունը: Այստեղից էլ այդ ժամանակաշրջանի հայրենասիրական պոեզիայի անմիջականությունն ու հոգեհարազատությունը:

Նտպատերագմյան շրջանում Հ.Ծիրագի հայրենապատումի մեջ արդեն նկատվում են նոր պորտմունքներ: խաղաղության ու աշխատանքի մոտիվը արծարծելուց հետո, առանձնապես 1954 թ. սկսած, Ծիրագը նոր նախնայի է կարելի է ասել՝ համարձակությամբ թափանցեց սեփական ժողովրդի անցյալի խորքերը, հայացքը հառած ազգային, արծարծելով Արագածի փնջերին ծվարած և սփյուռքի հայության ճակատագիրը: Ժողովրդի նորոյա կյանքում տեղի ունեցած կենսական փոփոխությունները պատկերվելիս բանաստեղծը հետ է նայում և ակնկալում անցյալի ծանր և ամոթալի հետքերի վերադարձը: Այս մտահոգման ծնունդ են «Մեր գյուղերի անուները», «Մեր մարդկանց անուները» պոեմները: Այս գործերը հայրենասիրական պոեզիայի հիմնալի նմուշներ են՝ իհարկե առնչված սոցիալ-քաղաքական, բարոյական, հոգեբանական խնդիրների:

Պետք է նշել, որ նտպատերագմյան շրջանում սկիզբ առած ընդունելի և անընդունելի սկզբունքների հակասությունների հորձանուտի մեջ Ծիրագը ևս տեղի է տվել ընդհանուր թեմաների պատկերին, սակայն չի հրաժարվել բանաստեղծական իր գեղագիտությունից, մնացել է գեղարվեստական փոխտալանության իր սահմաններում, սրտի ղեկերը միշտ բաց պահելով հայրենիքի ճակատագրի իր ընկալման և մեկնության առջև: Դա հնարավորություն է տվել նրան մեծամասամբ հեռու մնալ հեռտորակա ճիշդից: Իսկ հեռտորակության մոդուլները քիչ չէին գրական ասուլիսներում, որոնք ճամբարում էին մեծ գաղափարներ արտահայտելու պահանջով, չհասկանալով, որ հայրենիք վերանայող, ապրեցող, պաշտպանող քաղաքացին ունի բազմաշերտ ապրումներ՝ թափած, ուրախության, սիրո, ատելության, հիասթափության, թեմալանման և բազմաթիվ այլ զգացումներ: Հարվածի տակ էին առնվում հասարակ բոլոր այն ստեղծագործողները, որոնք ծնվել, ճակտվել էին աստվածային շնորհով և իրենց ասելիքն ունեին: Չէին խնայում Պ.Սևակին, Հ.Սահյանին, Վ.Դավթյանին, Ս.Կապուտիկյանին, Գ.Իմինին, Մ.Մարգարյանին, առավել ևս Հ.Ծիրագին: Նրան կազմում էին «ժողովախոսական», «մանր-բորժուական», «ապոլիտիկ», «արխայիկ», նույնիսկ «կրոնա-միստիկական» և այլ ստացանքի պիտակներ: Գրականացնող Ս.Աղաբալյանը հետազգայում այդ կապակցությամբ ափսոսանքով պիտի գրի. «Հնտպատերագմյան տասնամյակում տպագրվեցին հայրենասիրական ներշնչանքի ուժեղ բանաստեղծություններ, ինչպես Գ. Էմինի «Երգ երգողը», Հ.Ծիրագի մի շարք գործերը, սակայն աստիճանաբար թուլացավ քնարերգության հայրենասիրական լարը, ասպարեզ մտան ծնծղակները. թմբուկները, չափածո հրավառությունը: Իրապես խցանված էին երգի ակունքները, որ վերաբերում է հատկապես մտնրամական ապրումների քնարերգությանը»:

Սակայն պետք է նշել, որ իսկական բանաստեղծության ընթացքը չխաթարվեց: Ուրախալիս այն էր, որ երիտասարդ, տաղանդավոր բանաստեղծների մոտ հաղնես եկան նոր քննադատներ՝ պոեզիայի ընկալման և գնահատման իրենց բանիմամբ, թարմ ու անկողմնակալ չափանիշներով: Այդ էտապում էր, որ իրենց ուղեմիջ հանդիսացող դիտարկումներով ու խորհուրդներով գրականության զորագմանը նպաստեցին Ս.Սարիսյանը, Էդ.Ջրբաշյանը, Ս.Աղաբալյանը, Հր.Թամրազյանը, Լ.Հայկունյանը: Պոեզիան զգալի վերելք ապրեց՝ մարդու ներաշխարհը թափանցելու, նրա հարուստ ապրումները պատկերելու առումով: Հ.Ծիրագը իրատարակեց բանաստեղծությունների նոր շարքեր, պատմական պոեմներ, լեզնդներ, բալլադներ: Նվազեց ժամրային բազմազանությունը, ստեղծագործությունների մեջ ծոցովորական մտածողության խորային դրսևորումը, բանախոսական սյուժեների օգտագործումը: Ծիրագը երբեք չդավաճանեց բանաստեղծական իր հավատամքին և լեզվառոճական ծեղրքերումներին: Նրա բանաստեղծական երկավայությունը իրենի էություն հենքի վրա ստեղծեց հայրենիքի իր կերպարը, անմիջականության սահմաններում դարձնելով շոշափելի, առիթնոց: Բանաստեղծը մի նոր շքերթ սկսեց պատմական անցյալից, այդ շքերթի առջև դարձյալ խրդալու հառնեց Արարատը՝ քնարական հերոսի նրազ ու կարտուր:

## Ամփոփում

Հ.Ծիրազի ստեղծագործության մեջ առյուծի բաժինը հայրենապատումն է: Հերածնված փորձիկ Հայաստանի պատկերը մի կողմից, կորուսյալ Մեծ Հայքի ցավը մյուս, միասնաբար կազմել են նրա նախասիրած խորհրդանշանային արվեստի հիմնական սկզբունքը: Ետդարենգյան շրջանի ամենագգայուն և ճշմարիտ մարգարեն Ծիրազն է:

Ծիրազը չի ընդունել այն «քննադատներին», ովքեր նրան քարկոծում էին ազգային վշտի հաճախակի ընդգծման մեջ և ձգտում էին համոզել, որ ցավի պատկերումը թնաթափ է անում նոր սերունդներին: Ուստի նա կրկին ու կրկին անդրադարձել է Պատմական Հայաստանի կորստին և հույս հայտնել, որ նրբել է կվերադարձվեն Հայոց հողերը: Բանաստեղծի թմբարական երգերում և թե՛ պոեմներում մետաֆորներ են հանդիսանում վանդ, Սրփանը, Անին, Մուշը, Ղարսը, Տարոնը, Մասիսը, որոնք բանտնում են: Նա ընդունում է, որ Երևանը միակ հույսն է ազգի, բայց կորուստը մոռանալ չի կարելի: Պատահական չէ, որ Ծիրազի հայրենասիրական երգերը զարդարում են դպրոցական դասագրքերը:

Հ.Ծիրազի հայրենապատումը մի կողմից փրկված հայրենիքի հուսո ժպիտ է, մյուս կողմից՝ կորուսյալի տագնապած կանչ:

Հայ ժողովրդի պահանջատիրական իրավունքը կրկին ապացուցում է, որ Ծիրազի մարգարեական պոետական խոսքը հնչել է տեղին, և թողր ժամանակների համար է:

## Резюме

Львиная доля творчества Ов.Шираза — это патриотические песни. Символическими образами этих песен являются, с одной стороны — спасенная Армения и с другой стороны — потерянная Западная Армения. После Египте Чаренца самым чувственным и истинным пророком в поэзии является Ов.Шираз.

Шираз не принимал замечаний тех критиков, по мнению которых частое обращение к теме национальной скорби лишает веры новое поколение. Поэт не забыл потерянную родину и стихами вселял надежду, что когда-нибудь мы вернем наши земли. В лирических стихах и поэмах поэта символами являются Ван, Ситан, Ани, Муш, Карс, Тарон, Масис, которые томятся на чужбине. Шираз не раз отмечал, что надежда нации — это Ереван, но забывать потерянные земли никак нельзя. Не случайно, что его патриотические песни украшают школьные учебники.

Таким образом, песни Шираза — это улыбка надежд и тревога потери наших земель.

Требование армянского народа доказывает, что поэтическое слово Шираза как пророка звучало уместно для всех времен.

## Ծանոթագրություններ

1. Հ.Ծիրազ, Զնար Հայաստանի, «Հայաստան», 1977, էջ 146:
2. Նույն տեղը, էջ 148:
3. Հ.Ծիրազ, Երկեր 5 հատորով, հ.2, 1982, էջ 336-337:
4. Նույն տեղը, էջ 338:
5. Նույն տեղը, էջ 340:
6. Հ.Ծիրազ, Զնար Հայաստանի, «Հայաստան», 1974, էջ 57:
7. Նույն տեղը, էջ 101:
8. Նույն տեղը, էջ 121:
9. Նույն տեղը, էջ 122:
10. Նույն տեղը, էջ 125:
11. Հ.Ծիրազ, Զնար Հայաստանի, «Հայաստան», 1974, էջ 169:
12. Հ.Ծիրազ, Զնար Հայաստանի, գիրք 3, «Հայաստան», 1974, էջ 166:
13. Ս.Աթաբեկյան, Հովհաննես Ծիրազի քնարերգությունը, Երևանի համալսարանի հրատ., 1979, էջ 67:
14. Հ.Ծիրազ, Զնար Հայաստանի, գիրք 3, «Հայաստան», 1974, էջ 170:
15. Հր.Թամրազյան, Գրական ուղիներում, Երևան, 1962, էջ 182:
16. Հ.Ծիրազ, Երկեր 5 հատորով, «Մովսեսական գրող», հ.2, 1982, էջ 280:
17. Մ.Շահինյան, Հայ պոեզիան Հայրենական պատերազմում, «Մովսեսական Հայաստանի պոեզիան» գրքում, ռուսերեն, Մոսկվա, 47, էջ 7-8:
18. Ս.Աղաբաբյան, Արդի հայ գրականության պատմություն, հ.2, ՀԳԱ հրատ., 1998, էջ 46:



«ԻՄ ԽՈՍՔԸ ՀՅՈՒՂԱՎՈՐՎՈՒՄ Է ԻՆՉՊԵՍ ՆԵՂՈՍԻ ԴԵԼՏԱՆ»

(Հ.Էդոյանի պոեզիայի շուրջ)

Հ. Գ. Մուսայելյան

*Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն*

20-րդ դարասկզբի գեղարվեստական մտածողությունը նշանավորվեց իրերի ներքին կյանքը բացահայտելու լարված հետևողականությամբ, նրանց հետ հողորդակցվելու նոր եղանակով: Բանաստեղծական այս միտվածության առավել ակնհայտ ներկայացուցիչները /Ռ.Մ. Ռիլկե, Օ. Մանդելշտամ, Պ. Ցելան և ուրիշներ/ եկան հավաստիացնելու, որ պոեզիան գեղագիտական վայելքից առաջ ինքնաճանաչման դաժան փորձ է, անհատի ներքին և արտաքին աշխարհների անհամատեղելիության արդյունքում ծնված ազատություն, որն օժտված է ամեն ինչ անճանաչելիորեն կերպարանափոխելու գարամահերաշ կարողությամբ:

Մի տիեզերք է ձգվում ամենուր՝

Ներքու-Տիեզերքն անծայր: Հարաճուն

ծառն, օրորվելով, իմ ՄԵՋ է աճում:

Եվ թռչունն իմ մեջ թևածում է լուռ:

Ահա իրերի ռիկեմական դասավորվածությունը՝ արտաքուստ ինքնուրույն, անկախ գոյակցության մեջ պարփակված, սակայն նախահիմքում անառարկելիորեն փոխկապակցված, պայմանավորված միմյանց գոյությամբ: Այստեղ ճանաչման միանշանակություն չկա. իրերն ունեն իրենց յուրօրինակ կենսապայմանները, առանձին, կոնկրետ վիճակները, սակայն շարժվում ու փոխներադափանցվում են համընդհանուր կանոնների համաձայն՝ առանց յուրովի զննահատվելու անկախիքների: Այսպես առարկաների արտաքին կառուցվածքը ժամանակի ընթացքում փոխում է իր հետ ակամա հարաբերվող հոգևոր կառույցի հետևակարը, վերջինիս նկատմամբ դառնում առաջնորդող: Ներքին աշխարհն այսպիսով միշտ կախվածության մեջ է գտնվում արտաքինից, նրա քայլերին հավերժ հետընթաց: Յուրաքանչյուր առարկայի ու երևույթի վերաբերյալ մեր տեսակետներն ընդամենը կցվում են նրանց իրական գոյավիճակին, դառնում հավելյալ վկայակոչություն: Պատահական չէ, որ մեկնաբանելով Հյուդերլինի բանաստեղծությունները, Հայդեգերը նկատել է, որ քննադատությունը միշտ պետք է իրեն համարի ինչ-որ ավելորդ բան, սուլպի ինքն իրեն անհետանալ՝ հաստատելով բանաստեղծությունը իր գուտ վիճակում:

Արտաքին աշխարհը անհատի թշնամին է, նրա կործանման ամենահավանական նախապայմանը: Նման հանգամանքներում անհատն իր հայացքը սևեռում է դեպի ներսը՝ մի այլ աշխարհ, կյանքի այլ մի հնարավորություն ստեղծելու մտայնությամբ, որտեղ ոչինչ չի կարող թռնանալ նրա ներքին ազատությամբ:

Հատարիք քո ծնալ ներքին աշխարհում,

ձեռքդ դիր բարձրացող քո ժամի վրա,

թող նա հասունանա, ինչպես զգացում,

քանզի ամեն ինչ իր ժամանակն ունի,

որից դուրս նա մնում է առանց ահաբեկի:

Զսպիր աղաղակը քո մեջ արթնացող:

/Բացվող տերևի տատանումները

կարծես վերջ չունեն/։ Թե նայես նրան-

նա քնդ կնայի: Հոգին բաժանվում է  
քաղաքի և իր ընկալման միջև:  
Անցիր աննկատ սահմանն աշխարհի,  
որ կարող է նույնիսկ թաքնվել խորքերում  
պատահական բառի:

Այսպիսով, Հենրիկ Լեոյանն ընթերցողին միանգամից առաջարկում է սևեղծել դեպի ներքին աշխարհը՝ արնոդակիրեն նրա հայացքը շնչելով արտաքին աշխարհից: Բանաստեղծության առաջին տողի մեջ խողակվան ինֆորմացիան այնքան ճշմարիտ ու արագահաս է, որ անմիջապես ձևավորվում է ընթերցողի ընկալման համակարգը՝ իր իմաստակառուցվածքային ամբողջականության մեջ բացառելով կողմնակի ինչ-ինչ ազդեցիկների մուտքը: «Ծն» և «Ներքին աշխարհ» երկու խորհրդավոր հասկացությունները, միասնաբար հանդես գալով, ստեղծում են առավել ուժեղ և խորիմաստ ենթատեքստ. հանգամանք, որն արդեն որոշակի իշխանություն է ձևեր թերում բանաստեղծության ներկրորդ և մնացած տողերի նկատմամբ: Առաջին տողի հոգեբանական ներգործությունը հնարավորություն է ստեղծում տեսնելու և ճանաչելու «բարձրագույն ժամը», որը տվյալ իրավիճակում ներկայանում է ծիսական արարողության մեջ խաղաղ հասունության տեսքով: Նույն այդ առաջին տողի իմաստային և տրամաբանական ճյուղավորումներից է նաև «Ձապիր աղադակը քո մեջ արթնացող» տաղը: Իսկ պատահական բառի խորքերում աշխարհի սահմանն անցնելու հանգամանքը ամենևին էլ անսպասելի չէ: Հեղույանի պարագայում: Երբ նա փորձում է հանդես գալ իրերի ներքին շարժումը հովանավորողի դերում, ինքը ևս նմանվում է նրանց՝ դառնալով նրանց կենդանի հիշողությունն ու անձնեմխելիության նրաշխավորը:

Թե ուզում ես կյանք տալ իրերին, ինքդ իր դարձիր,

և կամ՝

Ամեն ինչ պատկեր է, բացի քնգանից,

Որպեսզի նրանք խոսեն՝ ինքդ պատկեր դարձիր:

Իրերը բանաստեղծական միջոցներ չեն Լեոյանի համար, այլ՝ իրենցով պայմանավորված իրականության յուրօրինակ մոդելներ, որոնք շարունակ գտնվում են իրենց նախնական վիճակից՝ ձգվելով դեպի նրանելի միջուկը: Եթե Լեոյանի բանաստեղծություններում ընթերցողն առերևույթ չի առնչվում զգացմունքների հետ, չի նշանակում, թե դրանք ընդհանրապես բացակայում են: Նրա բանաստեղծությունը պարզապես ունի այնպիսի կուտ և հերմետիկ կառույց, որ առանձին տարրերի դիտարկման փորձի արդյունքում բացառված չէ նրա ներքին համակարգի խախտումը: «Լեոյանի բանաստեղծություններում մի խորհրդավոր մթնոլորտ կա, որ շարունակ իրեն զգացնել է տալիս: - Գրում է Զ.Ավետիսյանը: - Արտացոլվող բանաստեղծական տեսադաշտը և՛ մերն է, և՛ անցյալինը» /«Լեոյան և խոսքի բանաստեղծը», «Գր. թերթ», 2003թ. թիվ 7/: Երկրորդն էլ կարիք չունի գրականագետի այս դիտարկումը, որը, ի դեպ, մեծ հարթության մեջ բանաստեղծի ստեղծագործության ամենանշանակալից առանձնահատկություններից մեկն է: Մնում է ավելացնել, որ բանաստեղծական տեսադաշտը և՛ մերը, և՛ անցյալինը լինելու հանգամանքը պայմանավորված է զգացմունքի ակայությանը, ինչը, սակայն, խոսափում է ցուցադրվելուց՝ ներքին անկառնություն չառաջացնելու նպատակով: Եթե բանաստեղծի պատկերացմամբ «Պոնգիան ակնարկ է նետված մեր կյանքին», ապա չի կարելի նրա առաջադրած իրավիճակները քննել առանց մետաֆիզիկական հայեցակարգի: «Որքան կատարյալ է բանաստեղծությունը, // այնքան դաժան է ընթերցողը», - մտախոգվում է Լեոյանը՝ այնուամենայնիվ ներառանգելով «Ինչ վերցնում ես՝ այն ես»:

Ինչպես Հեղույանի, այնպես էլ գեղարվեստական նոր մտածողությանը հարող բանաստեղծների գործերում փոխված ենք տեսնում ոչ միայն իրերի ու նրկայների ընկալումները, այլև բանաստեղծի կոչումն առեասարակ, նրա առաքելության իմաստն ու

նշանակությունը: Դեպի ներս ուղղված հայացքն օտարաճան՝ է հասարակությունից, ի դեմս որի բանաստեղծը տեսնում է անհատի ներքին հակասություններին անհաղորդ գանգվածը: Նա ինքնաճանաչման այլ հնարավորություն է փնտրում, ինչը չի պարտադրում հասարակությանը, ավելի կոնկրետ՝ ընթերցողին.

Ես քեզ եմ բերում

իմ մարմինը-միակ ականատեսը

իմ հավերժական բացակայության:

Չնայած Հեղոյանի բանաստեղծական այս կառույցի առաջին պլանում ընթերցողի ասնշությունը մարմին- առարկայի՝ որպես պոետական միջոցի հետ է, սակայն գեղարվեստական բուն հիմքը հենց «հավերժական բացակայությունն է», նրա մետաֆիզիկական ընկալումը: Այստեղ բացակայել՝ չի նշանակում գոյություն չունենալ, ընդհակառակը՝ առավել շատ լինել, քան այդ նույն մարմինը, որն ընդամենն «ականատեսն է» իր ներկայության տարածությունն ու հնարավորությունները գնրագնացող այլ մի իրականություն: Պարզվում է՝ արտաքին աշխարհը ներքինի հետ հարաբերվում է ընդամենն ականատեսի կարգավիճակում, և նրանք երկուսն էլ միմյանց նկատմամբ պատասխանատու չեն իրենց իսկ գործունեության համար: «Ոչ մի սահման արվեստի և կյանքի միջև, //բայց ոչ արվեստն է մոխրանում դրանից, ոչ կյանքն է ցնդվում /ինչպես նաշադիրը հիվանդի քթի տակ»: Ահա արվեստի և կյանքի փոխհարաբերության էությունական ձևակերպումը, որ նույնն է, թե նրանց կապը մեխանիկական է ու արտաքին: «Ճշմարիտը արվեստի և կյանքի փոխազդեցությունների, մաքուր արվեստի և այլնի մասին բոլոր ինչ հարցերի ինքնավերջ իմաստը չէ, - գրում է Մ.Բախտիը- նրանց իսկական պաշտոնը լոկ այն մասին է, որ և՛ արվեստը, և՛ կյանքը երկուստեք ուզում են թեթևացնել իրենց նախատակը, հրաժարվել պատասխանատվությունից, քանզի ավելի հեշտ է ապրել՝ պատասխանատու չլինելով կյանքի համար, և հեշտ է ապրել՝ հաշվի չնստելով արվեստի հետ» /«Արվեստը և պատասխանատվությունը», «Գեղարտ», 2002թ., թիվ 3/:

Պոեզիայի ազակենսագրականացումը նորերի ստեղծագործություններում հեռացում չէ անցյալից: Այն ունի փոխտպալական իր ընդհանրացումները, որոնք եթե մինչևիսկ ստվերում են գոյտ կենսագրությունը, ապա մի այլ իրավիճակում հաստատվելու պայմանով՝ հետամտելով էսթետիկական ինչ-ինչ սկզբունքներին.

Ինչ սովորել ես՝ մոռացիր անհապաղ,

ինչ գիտես՝ այն տուր անցյալի քամում,

որպեսզի այդ ամենը դառնա կատարում,

որպեսզի դու ապրե՞ս, որպեսզի լինե՞ս դու:

Հեղոյանի պոետական այսօրինակ խտացումների կարելի է հաճախակի հանդիպել արդի համաշխարհային բանաստեղծության մեջ: «Մեկտեղ ապրելի մի արկած է, որում սերը, մոլերմությունը // մի հրաշալի հանդիպում է նրա հետ, որը ես չեմ, // մեկի հետ, որը ուրիշ է և հարստացնում է ինձ» /Տահար Բեն Ժելլուն, Ֆրանսիա/: Եվս մեկ օրինակ. »Դու և մահկանացուն // զեն-հանդիման: Նա // հենց դու ես՝ առանց պատասխանի» /Դավիդ Մարիս Տուրպուզ, Իտալիա/: Ահա թե ինչու ժամանակակից հեղինակների մոտ «ես»-ի խնդիրը չի մասնավորվում, չի դրվում որոշակի կերպարի մեջ. հանգամանք, որն էլ ավելի է ընդլայնում գեղարվեստական խոսքի գործունեության ոլորտները: Եթե բանաստեղծը խոսում է իր անունից, ապա չի կարելի այդ խոսքի նտնում փնտրել կոնկրետ անձնավորություն: «Բանաստեղծներին պետք է կարդալ առանց նրանց ռեզիդենցիայի», - նկատում է Ռ.Բաթթը: Ժամանակի ընթացքում բանաստեղծին իր մեջ հնարավորին չափ կուտակում է մարդկության, քաղաքակրթության անցած փորձը և նրբ հանդես է գալիս որևէ իրավիճակում ննթագիտակցորեն վկայակոչում է այդ կուտակածը: Հետևաբար բանաստեղծական իրականության հետ յուրաքանչյուր հանդիպում ինքնին արդեն անցյալի որոշակի արժեքներին առնչվելու հավանական քայլ է: Պոեզիայի ապակենսագրականացումն

այսպիսով չաճաք է անցյալից ձեռքագատվելու մտավախության տեղիք տա, քանզի ատարկանքի նմանօրինակ դատավորվածության դեպքում այն չի կարող ոչ թե տեղ գտնել, այլև հանդես գալ Երկրորդական պլանում:

Ինչքան շոշափելի է ներկայի մեջ բանաստեղծական խոսքի խտությունը, այնքան առավել խորն են ձգված նրա արմատներն անցյալի մեջ: Այստեղից էլ՝ զգացմունքի, անձնական ապրումների ցուցադրման անհավանականությունն ու անտրամաբանությունը: Զգացմունքը մեծ տարրություն է զբաղեցնում բանաստեղծության մեջ՝ տեղ չողնելով ներքին հիմնական պաշարի համար, որի աղբյուրը հենց անցյալն է: «Զգացմունքը ինչ որ շահում է իր ուժգնությամբ, - ասում է Շատոբրիանը, - կորցնում է տարածվելով» /Շատոբրիան, «Քրիստոնեության հանճարը», Երևան, 2003թ., էջ 130/: Ուստի չի բացառվում բանաստեղծության ստրուկտուրայի ստեղծումն այնպես, որ զգացմունքն այնտեղ հանդես գա նույն կարգավիճակով ու տարողունակությամբ՝ առանց սակայն պաշտոնական տեսք ընդունելու: Բանաստեղծության մեջ հոգեբանական նախապատրաստական հոդի ակնհայտ ներկայությունը խոսում է նրա ընդգրկված տարածության փոքրության մասին: Հողախախտվելով՝ լեզվական կառույցը բնավ կասկածի տակ չի առնում բանաստեղծության ընդհանուր բաղնջության տևականությունը: Ընդհակառակը, շիթմիկ կտրվածքով ու հնչողության բազմիմաստությամբ բանաստեղծական դաշտը դարձնում է առավել պրկված, զգայուն՝ ամեն մի հպումի նկատմամբ: Թ.Էլիոթի «Չորս կվարտետի» ընթերցողն այնտեղ կհանդիպի ընդհանուր մի խառնադմուկի, ինչը խորհրդանշում է բեթհովմեյան կվարտետի ոգով ստեղծված այս գործի կուռ ներդաշնակությունը: Այս աննախագեղ «փվածքների» սկզբունքներով կերտված երկի մեջ անհավանականորեն զուգորդվում են բոլոր այն տարրերը, որոնք իրենց իմաստային նշանակությամբ թվում են հակասական, բայց ընդհանրության մեջ ներդաշն են, որովհետև, ինչպես ասված է պոեմում՝ Հերակլիտեսից վերցված բնաբանում: «Քանի որ քանականությունն ընդհանուր է, մեծամասնությունն ապրում է միակերպիք»: Աստված-Աշխարհ-Մարդ նուամիասնության նորոպի մեկնությունն ենք տեսնում նաև Պաուլ Յելանի ստեղծագործություններում, որտեղ ներքին անհամաձայնությունների ու անսպասելի դադարների դիալեկտիկական ըմբռնումը վերստին ուղղված է գոյության ոլորտների վերջնական միասնությանը: Ահավասիկ՝ մի հատված նշանավոր «Մադոնա» բանաստեղծությունից.

Ոչինչ էլինք մենք  
այդպիսին մնում ենք  
և... կմնանք:  
Հավերժ ծաղկելով՝  
մենք զարծյալ ոչինչ ենք-  
վայրի մի վարդ:

Բանաստեղծական այսօրինակ քաջ համակարգվող մշտապես վառ են պահում այլ կերպ գործելու հնարավորության խնդիրը: Իր ժամանակի հետ հարաբերվելու բանաստեղծի ամենաազդեցիկ նդանակը, թերևս, իրերի ու երևույթների անխուսափելիությունն զգալու, իրավիճակների մեջ նրանց փոփոխականությունը տեսնելու մեջ է: Մենք, անշուշտ, ի վիճակի՝ ենք կանխապես պատկերացումներ կազմելու իրերի մասին, բայց է՞ որ նրանք կարող էին և այլ տեսք ունենալ, եթե չլինեք մեր կանխումը: Նշանակում է՝ նրանց որոշակի վիճակի վերաբերյալ մեր ըմբռնումները չեն պայմանավորում նրանց գոյության հեռանկարները: Այսպեսով հանդերձ՝ եթե իրը որոշակիորեն ակնհայտ է, ապա մեկընդմիջտ ապահովված է նրա անմահությունը, քանզի նրա հնարավոր մահվան դեպքում նրա մասին մեր դատողությունները նրան այլ իրավիճակներում տեսնելու կարողությամբ ենք օժտված: Ուստի թուր հանգամանքներում իրը մնալուն է, և միայն նա՝ կարող է իր նկատմամբ վերաբերմունք դրսևորելու իրավունք վերապահել մեզ: Այլ կերպ՝ մենք տեսնում ենք լոկ այն, ինչն արդեն դուրս է մեր տեսադաշտից:



Պեճեգիան, մեծ հաշվով, անուանե՞ր տալն է, և երբ այդ գործընթացը տեղի է ունենում վերոհիշյալ հաճախմանը ներում, այդ անունները ձեռք են բերում բազմիմաստություն: Երբ Ռիլկեն ասում է՝ վարդ, պտուղ, շալ, նա հենց դա էլ նկատի ունի, բայց հենց փորձում է տեղաշարժել, նրանք ձեռք են բերում այլ միջավայրի հնարավորություն՝ ստանալով իմաստային նոր բացահայտումներ: Որևէ առարկայի նկատմամբ հեղինակի զգացողությունները տարածվում են տվյալ առարկային իր կողմից տրված անվան թեկունքից՝ Հնետևաբար և՛ որևէ առարկայի անվամբ պայմանավորված միջավայրը հեղինակին միաժամանակ իռուշում է հաջորդ առարկայի անունը՝ յուրովի նպաստելով ստեղծագործական գործընթացին: Այստեղից էլ՝ հեղինակի անուղղակի կախվածությունը միջավայրից, ինչն էլ նրան գրկում է ինքնաբացահայտման հնարավորությունների լիարժեքության կատարելությունից՝ որոշակիորեն կանխելով նրա միջանկյալությունը երևույթների արտաքին կառուցողականության գործում: Այս դիտարկյունից ուշագրավ ընդհանրացում է կատարել Ռուան Բարթը. «Ստեղծագործությանը ոչինչ չի մնում հեղինակի անկեղծությունից. նրա լռությունը, նրա զգեստները, նրա միաստությունը, նրա կախվածները, նրա վախը՝ այն, ինչ ստեղծագործությունը ջերմությամբ է լցնում, բացի դրանից ոչինչ չի կարող մտնել գրափոր խոսքի մեջ, քանի որ եթե հեղինակն ասում է այդ, ապա նա ուզում է ցուցադրել այն, ինչին պետք է ինքնատու, նա դուրս չի գալիս թատրոնի համակարգից, որը միշտ սպառնալից է» /Ռ. Բարթ, «Գրականությունը և ճշմարտությունը», Երևան, 1999թ., էջ 132/:

Այսօրինակ դիտարկումներից եզրահանգել կարելի է, որ ստեղծագործող անհատի, ընդհանրապես մարդու ինքնադրսևորման ներքին համակարգը կառուցվում է արտաքինի հաշվարկներով, հաճախմանը, որը և պայմանական անուններ է տալիս նրա այս կամ այն գոյահատվածին: Այս երևույթի դիպուկ բնորոշումն ենք տեսնում մեկ ուրիշ տեսաբանի Ռոբերտ Մուզիլի հետևյալ ձևակերպումներում. «Մարդը միայն արտահայտչական պլանում է դրսևորում ստանում, որը կայանում է հասարակական ձևերում տեղափոխվելու մեջ, իսկ բովանդակության պլանում՝ բոլորը սկզբունքորեն նույնն են և անփոփոխական» /«Մարդուս կերպարանափոխության թեղիներ», «Արտասահմանյան գրականություն», 2004թ. թիվ 1, էջ 233/:

Գեղարվեստական նյութը տեղադրել բանաստեղծական համակարգի մեջ՝ նշանակում է ժողովել, վերադասավորել աշխարհը, դրսևորել կազմակերպչական ունակություններ: Իսկ այս դեպքում մեր գործը հեղինակային ճաշակի հետ է, որը ոչ թե տարբերություն է դնում իրերի միջև, այլև ընտրություն է կատարում՝ հենվելով քնադդի և ընկալման ընդհանուր ազդեցների վրա: Ընտրելով որևէ իր՝ նշանակում է տարածություն սահմանել նրա նկատմամբ՝ ջանալով սցենոհեռն հաղթահարել այն: Այսպիսով, շրջակա աշխարհի հետ հարաբերության մեջ մտնելու անհատի հիմնական արգելքը ոչ այլ ինչ, քան նրա ճաշակն է: Շրջանցելով այն հաճախմանը, որ մերօրյա աշխարհի վերադասավորման գործընթացը պահանջում է կազմակերպչական համեմատաբար բարդ ու դժվարին աշխատանք, փորձենք երևույթը դիտարկել այլ հայեցակետից, որտեղից, այնուամենայնիվ, առավել հիմնավոր ու հավանական են թվում բանաստեղծության իմաստակառուցվածքային համակարգի բարդացման դրդապատճառները:

Յուրաքանչյուր խոսք տեղեկություն է: Խոսել՝ նշանակում է տեղեկացնել: Իր հոգևոր աշխարհը ներթափանցելու գործընթացում քանաստեղծը հանդիպում է նախ ոչ թե խոսքին, այլ նրա մասին ունեցած իր տեղեկություններին, որոնք, տեղափոխվելով լեզվական որոշակի կառույցի մեջ, յստահում են՝ տարրալուծվելով միմյանց իմաստային նշանակության մեջ: Ընթերցմի հատված Հ. Էդդանի «Նարադոքսներ» բանաստեղծությունից.

Երբ խոսքը ուժգին է և բարձր չափազանց, նա լուրմ եմ:

Երբ լուրջությունը չի ձգտում բաժնրին, նա խոսում եմ:

Երբ անհայտն ավելի անհայտ է դառնում, նա նրան ճանաչում եմ:

Երբ աշխարհը վազում է ժամանակի դաշտով, նա կանգնած եմ:

Երբ ժամանակը դառնում է ճահիճ, նա վազում եմ:

Երբ զգացմունքը ողողում է ինձ, նա դատարկվում եմ:

Երբ հարցեր չեն տալիս, նա պատասխանում եմ:

Եվ այսպես շարունակ: Այս հատվածի մեջ յուրաքանչյուր տող ունի իմաստային իր ամբողջականությունը /«Ամեն տող ապրում է ինքնուրույն կյանքով, //ամեն տող սեփական իր պատկերն ունի»/: Ընթերցողի գործն այստեղ կրկնակի դժվարանում է, քանզի նրա խնդիրը ոչ թե տվյալ բառերի ու նրանցով արտահայտված իմաստների հետ է, այլև նախապատմությունների, որոնք փաստորեն ներկա չեն բանաստեղծության տողերի ընկալման որևէ փուլում, քայց և իրենք են վերահսկում իմաստային փլվածքների տեղեկատվական դաշտը: Այս տողերի մեջ ընթերցողը չի առնչվում նույնիսկ ենթատեքստերի հետ, որոնք տողատակի որևէ շերտի մեջ համեմայնդեալ պետք է պարունակեն որոշակի տեղեկություններ՝ հիմք հանդիսանալով ինչ-ինչ նգրահանգումների: Եվ այսպես. ստեղծվում է մի իրավիճակ, երբ առանձին տողերով արտահայտված յուրաքանչյուր պարադոքսի փխխտիպական նշանակությունն ըմբռնուց հետո, պետք է այն ժամանակավորապես վերցնել դնել մի կողմ և շարունակել հիմնական աննիթր՝ փլվածքներում առկա նախապատմությունների առանձին-առանձին վերծանումը, քանզի «եւ խոսքը ճյուղավորվում է ինչպես Նեղոսի դելտան»:

### Ամփոփում

Սույն հոդվածի մեջ քննության են առնվում 60-ական թթ. հայ բանաստեղծության առաջատար դեմքերից մեկը՝ Հենրիկ Էդոյանի ստեղծագործության մի քանի հիմնական առանձնահատկությունները: Վերլուծությունները հաստատված են արդի համաշխարհային պոեզիայի ընդհանուր համապատկերի վրա և նպատակ ունեն ուրվագծել ժամանակակից հայ բանաստեղծության զարգացման առաջնահերթ միտումները:

### Резюме

В данной статье подвергается исследованию ряд основных особенностей творчества одного из передовых представителей армянской поэзий 60-х годов Генрика Эдосяна. Исследования проведены на общем фоне современной мировой поэзии и преследует цель определить основные тенденции развития современной армянской поэзии.

### Գրականություն

1. Հ. Էդոյան, «Հնտգրություն», «Ապոլլոն» հրատ., 2002թ.:
2. «Գրական թերթ», 2003թ., թիվ 7:
3. «Գնդար», 2002թ., թիվ 3:
4. Ռ. Բարթ, «Գրականությունը և ճշմարտությունը», «Ապոլլոն» հրատ., 1999թ., էջ 132:
5. Շատարբիան, «Քրիստոնեության հանճարը», «Ապոլլոն» հրատ., 2003թ., էջ 130:
6. «Արտասահմանյան գրականություն», 2004թ., թիվ 1, էջ 233:

## ԽԱԶՆԵՆԻ ՀՈՎՏԻ ԾԱՌԱՆՈՒՆ ԲԱՎԱՂԻՐԻԶՈՎ ՄԱՆՐԱՏՆԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

Ժ.Ռ. Պողոսյան

Հայոց լեզվի և նրա դասական դժան մեթոդիկայի ամբիոն

*Բազմազան ու բազմաբնույթ են Մարտակերտի շրջանի տեղանունները: Ըստ պարունակած իմաստի նրանք նշում են իշխանական կալվածքներ, բնակատեղի, բերդեր և ամրոցներ, վանական համալիրներ, ջրանուններ:*

Մարտակերտի շրջանի տեղանունների, նաև մանրատեղանունների մի զգալի շերտ ծառատեսակների անվանումներ են: Երևույթը հատկապես հատուկ է անտառաշատ վայրերին: Խաչենի հովիտը, լինելով նմանատիպ տարածք, հարուստ է ծառատեսակ նշող մանրատեղանուններով: Այդպիսիք են՝ Չինարին տակը, Հռեն տափը, Հյունին խույթը, Ըլբբաստի գունն, Տզղբոստեն դյուզը, Տանձօտ յաստանը, Սզնօտ թաղը, Տրնջրեն քերձը, Հացին ախպուրը, Հյունօտեն տոշը, Ծիլտան տանձին, Հյօնոտ ծոր, Կաղնօտ պատ, Պիճ ճղալընն ծորը, Ճոխտ ճղալընն կողքը, Ճղալընիոդ, Կղղնախաչ, Տրնջրեռը, Կիճճօտ, Կտռոնօտ, Կիրիմասրօտ, Հրճապօտ, Սրվալնիօտ, Խրնձուրատափ, Ծղորահող: Դարեր շարունակ անտառն այստեղ ապրող մարդկանց համար եղել է աշխատանքային գործունեության վայր, իսկ պատերազմների ժամանակ՝ թաքստոց, ապաստարան, բնակատեղի, ուստի տեղաբնակներն այս կամ այն վայրին, տեղանքին անուն տալու համար շատ հաճախ բնութագրիչ են բնդունել ծառանունը: Այդ տեղանուններից շատերը եղել կամ հետագայում դարձել են բնակատեղի կամ գյուղ: Այդպիսի տեղանուն է, օրինակ, *Թրխկօտը*: Մա, ամենայն հավանականությամբ, շատ հին գյուղ է եղել, մինչև վերջին ժամանակներս Մարտակերտի շրջանի Չղբրան գյուղի թաղամաս էր, այսօր, ցավոք, անմարդաբնակ է: Գյուղն իր անունը ստացել է թրխկի (բստ Հր.Աճառյանի՝ Դախկի) ծառատեսակից և նշանակում է այնպիսի վայր, որտեղ շատ թխկիներ կան: Մանրատեղանունը բաղադրված է թրխկ+օտ կաղապարով: Այստեղ ծառանունը բառի իմաստը կրող բաղադրիչ է, -օտ -ը՝ տեղանքի իմաստ պարունակող գոյականակերտ վերջածանց, որը գրական հայերենում ներկայանում է - ուտ ձևով և ցույց է տալիս մի բանով առատ վայր, տեղ:

Այս կարգի բնակավայր նշող մանրատեղանուն է Հյունա հող հարադիր բարդությունը: Այն Մարտակերտի շրջանի վաճառ գյուղի պատմական թաղամասերից մեկն է, որի անվանումը գնալով արտանդվում է առօրյա խոսակցական լեզվից: Այս մանրատեղանունն առաջին բաղադրիչը Հյունի (հռնի) ծառանվան սերող տրակների հոլովածն է: Մանրատեղանունը նշում է հող, տարածք, որտեղ հռնի շատ ծառեր են եղել:

Ծառանուն գերադաս բաղադրիչով կազմված համարյա բոլոր մանրատեղանունները նշում են տարածք, անտառի հատված, որոնց առաջին բաղադրիչով շնչվում է տվյալ ծառատեսակով տեղանքի հարուստ լինելը, իսկ երկրորդ բաղադրիչով՝ տեղանքի դիրքը, ֆիզիկական կառուցվածքը: Օրինակ՝ Ճղալընտեն թաղը, Ջրդանեն խույթը, Ջրկօտեն չրխտը, Չինարին դյուզը, Սրվնօտեն յաստանը, Ճղալընտեն ծորը, Նրնօտեն փոսը, Կենին պատը, Ծղորտօտ դաշը, Հրճալընտ թախտը, Կենին կապը և այլն:

Նույն կերպ *Հինքրիբլվկն* դաշը մանրատեղանունը նշում է անտառամաս, որը հայտնի է տեղական կաղամախու (բարբառում՝ լինքրիբլվկ՝ լայն տերևներ ունեցող) ծառատեսակով: Այդպես էլ *Ճղալընտ ծոր* մանրատեղանունը նշում է տեղանք (ծոր), որտեղ շատ բնկուղենիներ (ճղալընտ) են աճում:

Խաչենի հովտի մի շարք ծառանուն բաղադրիչով մանրատեղանուններ ուղղակի կամ միջնորդավորված կապով առնչվում են հին կամ նոր հավատալիքներին և ունեն գրեթե սրբավայրի նշանակություն: Այդպիսինն է *Կղղնախաչ* մանրատեղանունը, որն անցյալում ամենայն հավանականությամբ քրիստոնեական հավատի ուխտատեղի է եղել: Չի բացառվում, որ ինչ-որ կաղնու հարևանությամբ կանգնեցված է եղել խաչքար, որից էլ առաջացել է բառը, որպես տեղանքի անվանում: Տեղանքն այսօր բնկավում է իբրև անտառամաս:

*Ծրնգլըմ կենի* մանրատեղանունը գուտ նշում է ծառ, որի մոտ ամեն անգորդ պարտադիր կանգ պիտի առնի, ծառի որևէ ճյուղից կախի գունավոր շորի մի ծվեն (ծրնգլը), որը նախապես իր հետ պարտավոր է ունենալ: Այստեղից էլ՝ ծրնգլըմ կենի „ծրնգլը“ – ներով

(կտորի ծվնններով) զարդարված կէնի: Կէնին, ըստ Հդ. Ազայանի, կենագգինների ընտանիքին պատկանող բազմամյա, մշտադալար բույս է, որը նաև անվանում են կարմրածառ, գնդձի:

Հնարավոր է ծառի մշտադալար լինելն է պատճառը, որ այն հին ժամանակներից ի վեր համարվում է պաշտամունքային ծառ: Հենց այդ ծառերի ճյուղերից է, որ նոր տարվա տոնավաճառություններին տնկաբնակները տուն են տաճում՝ զարդարելու: Ծառերից մեկն էլ բնակիչների կողմից պաշտվել է այնքան, որ ժամանակի հետ նրա գտնվելու վայրը մանրատնդանվան իմաստ է ստացել:

*Տընջըրեն ախայուր* մանրատնդանունն այսօր որպես այդպիսին չի ընկալվում: Ոչ հեռավոր անցյալում այն եղել է ամառային զբոսախնջույրների վայր՝ չնայած տնդանքի դժվարանցանելիությանը: Այն գտնվում է Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի տարածքում: Տընջըրեն ախայուրը զբոսախնջույրի գնալու սովորությունը, որ մինչև 20-րդ դարի 50-60-ական թվականները (ինչպես գյուղացիներն են վկայում) պահպանվել է, եկել է հին ժամանակներից և կապ ունի տընջըր (սոսի) ծառատնեակի հանդեպ հեթանոս հայերի ունեցած պաշտամունքի հետ:

Այս կարծիքին հանգելու օգտին է խոսում նաև այն, որ տնդանքի հարևանությամբ հայ պատմաբանների կողմից տնդոդրվել է վիմավոր եկեղեցի: Հայտնի է, որ շատ եկեղեցիներ *կատուգվել են* հեթանոսական սրբավայրերի տնդում, որպեսզի ժողովրդին ավելի հնչու լինի քարոզել: Սա, երևի, հենց այն դեպքն է, երբ սոսի՝ հեթանոսների կողմից պաշտվող ծառի (սրբավայրի) մոտ կառուցվել է եկեղեցի, բայց ժողովրդի գիտակցության մեջ հինը չի մարել: Ընդամենը փոխակերպվել է՝ ծառի տնդ սրբացրել են նրա կողքի աղբյուրը: Տընջըրեն ախայուրը համարվում է մանրատնդանուն:

## Ամփոփում

«Ուսանի հովտի ծառանուն բաղադրիչով մանրատնդանունները» մեզ հետաքրքրել են «Մարտակերտի շրջանի տնդանունների բառակազմական կաղապարները» թեմայով ուսումնասիրության համատեքստում: Փորձ է արվել ներույթը գնահատել ոչ այնքան լեզվաբանական, որքան ընդհանուր ճանաչողական հայեցակետից՝ համարելով, որ քարտազրված տնդանունները հետագայում կարող ենք ենթարկել և՛ իմաստաբանական, և՛ բառակազմական վերլուծության:

## Резюме

Данная работа интересовала нас в контексте исследований по теме “Словообразовательные основы топонимов Мартакертского района”. Сделана попытка оценить явление не столько с точки зрения языковедения, а с общепознавательной-считая что картографированные топонимы могут быть в дальнейшем подвергнуты как смысловому, так и словообразовательному анализу.

## Գրականություն

1. Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան. II, 1983թ. էջ 140:
2. Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983թ. էջ 127:
3. Հդ. Ազայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976թ. էջ 718:
4. Հայոց լեզվի պատմության հարցեր, 3, Երևան, ԳԱ Հրատ. 1991թ.:
5. Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմության նախագրային շրջան, Երևան 1987թ.:
6. Հ.Լ.Բարսեղյան, Հատուկ անուն, Երևան 1964թ.:



ԳՐԱՃԱՆԱԶՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԸ 19-ԻԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ  
Մ.Բ. Յարամիշյան

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

19-րդ դարի առաջին կեսի հայ դպրոցի և մանկավարժական մտքի ու մեթոդիկայի մասին արդեն խոսվել է տղո՛ւնրիս հեղինակի »Գրաճանաչության մեթոդը 19-րդ դարի առաջին կեսին« խորագրով հոդվածի մեջ:

Սույն հոդվածում փորձ է արվում լուսաբանելու նշված ժամանակահատվածի նրկրորդ կնսի գրաճանաչության ուսուցման պատմության մի էջը:

Լեզվի ուսուցման հիմքը կազմում է գրագիտության ուսուցումը: Հայտնի է, որ նրկար դարեր /մանավանդ միջնադարում / ինչպես Արևմտյան Եվրոպայում ու Ռուսաստանում,այնպես էլ մեզ հայերիս մոտ, սովորողների ճնշող մեծամասնության համար ուսուցումը դպրոցում փաստորեն սահմանափակվել ու ավարտվել է սոսկ գրագիտության ուսուցմամբ, ընդ որում այդ «գրագիտությունը» շատ հաճախ սպառվել է մի կնրպ կարդալ իմանալով. գրելու «արվեստին» նրբեմն այդպես էլ չէին հասնում:

Այս հանգամանքը մեծ չափով բացատրվում էր առեհատարակ ուսուցման և մասնավորապես գրագիտության ուսուցման մեթոդների տաժանելի դժվարությամբ: Սրանով էլ պիտի բացատրվել այն, որ մի շարք նրկրներում առաջավոր մանկավարժները որոնում են գրագիտության ուսուցման ավելի հեշտ ու ռադիոնալ մեթոդ, որպիսին դառնում է 19-րդ դարից կիրառվել սկսող հնչական մեթոդը:

Ռուսաստանում հնչական մեթոդի կիրառման և տարածման համար 19-րդ դարի 60-ական թվականներին պարտական են առաջին հերթին Կ. Ուշինսկուն: Հայերի մոտ այս նույն դերը կատարել է Ն. Աբովյանը, որը դեռ 19-րդ դարի 30-ական թվականների վերջերին այդ մեթոդով կազմում է իր «Նախաշավիղը»: Դրանով իսկ Ն. Աբովյանը դառնում է հնչական մեթոդի առաջին կիրառողը և քարոզողը Անդրկովկասում և առաջիններից մեկը Ռուսաստանում:

Նա գտավ այդ մեթոդը, որը, սակայն, ժամանակակիցների կողմից դիմավորվեց սրերով և իր ցավալի կորստից հետո միայն գնահատվեց արժանիորեն:

Տառահեղական մեթոդի խիստ քննադատությունը Ն.Աբովյանը տալիս է իր հայտնի «Խաղարկություն մանկանց»-ում՝ խոսելով աշակերտի անուհից, որը պատրաստ է ամեն բանի, միայն թե կարողանա ազատվել դպրոցից, տառերի անունների մեքենայական, տանջալի սերտումից, դրանցից վանկեր ու բառեր կազմելու ոչ պակաս տանջալի աշխատանքից: «Նախաշավիղի» առաջաբանում Աբովյանն այսպես է արտահայտվում հին ու նոր մեթոդների մասին. «Խնդրեմ ի փառս Աստուծո, ի բաց թողու գլխար անվանակոչություն տառից այբ, բեն, գիմ, դա, ըս և այլն. գտանայն տառս պարտ է ըստ բնական հնչմանն արտասանել»: Սա փաստորեն հնչական մեթոդն է, որով մեծ թափ է ստանում հայոց լեզվի սկզբնական ուսուցումը: Այդ մեթոդի մոտորը հայ դպրոց մի ամբողջ հնդաշրջում է մայրենի լեզվի մեթոդիկայում: Համարյա նույն մտքին ենք հանդիպում 1861 թ. Թիֆլիսի գիմնազիայի աշակերտների կողմից լույս ընծայած «Այբբենարան հայերեն լեզվի», իսկ հետագայում 1869 թ. Պետերբուրգի մի խումբ ուսանողների կողմից ստեղծված «Հայերեն գրել-կարդալ ուսուցանելու հրահանգ»-ներում, ուր շարունակվում է բարձրագույն հնչական եղանակին անցնելու անհետաձգելի պահանջը, և մասնավորապես գրված է. «Որպեսզի երևխան հեշտությամբ կարդա,բնավ հարկավոր չէ տառերն այնպես անվանել ինչպես սովորում ենք անվանել /օրինակ՝ կատու= կեն+այբ=կա, տյուն+ո-վյուն=ուտ /այնպես, ինչպես նորա բառերի մեջ աավում,արտասանվում են, լավում են, հնչվում են»: (1)

Պետերբուրգի հայ ուսանողների «Հրահանգ»-ից բարված այս հատվածը այնքան նման է Աբովյանից քիչ առաջ բերված մտքին, որ նթ չկասկածիքն, թե արդյոք Աբովյանի

«Նախաշավիղը» կարող էր նրանց ձեռքը ընկած լինել, կենթադրեմք, թե շարադրվել է նրա ազդեցության տակ:

Իր «Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին» հոդվածում Աբովյանը «Նախաշավիղի» հնչական մեթոդով ստեղծած իր գրքի կառուցման սկզբունքների մասին գրում է. «Այսպիսով, նա գլխավոր ուշադրությունը դարձրի այն բանի վրա, որ հենց գրքի սկզբում, Նիմայեթի ու Ստեֆաննի սկզբունքներով ցուցում տամ կարգավոր-գրելու մասին և հնչական մեթոդը ցույց տամ, որ նախ նա ինքս մի քանի մասնավոր աշակերտների վրա փորձել էի և լավագույն արդյունքի էի հասել, այնպես որ հազվի 5-6 տարեկան երեխաները տառաձևերը ճանաչելուց հետո իսկույն կարողանում էին ամբողջ բառեր ու խոսքեր կազմել և մի քանի օրում սկսել հայերեն ու ռուսերեն կարդալ»: (2)

Աբովյանն առաջինը հայ կյանքում, ժխտելով հնադարյան տառահնգական մեթոդը, սկզբնավորելով հնչական մեթոդը, հաստատում է, որ մեթոդը կիրառելիս վերցրել է նվորական դպրոցի պրակտիկան և «Երեխաների մտածելու և խոսելու ունակությունը դյուրին ներանակով զարգացնել կարողանալու նպատակով նա աշխատում էի ուսուցիչների արագիսի ցուցումներ տալ, որ կան Նիմայեթի, կամսելի և կրաուզի մտավարժությունների մեջ» /3/:

Թե որքան մեծ է եղել այս հարցում Աբովյանի դերը, նրանով է հենց միայն այն բանից, որ հնչական ձևանակը, 19-րդ դարի 70-ական թվականների սկզբից մոտոք գործելով դպրոցները, դեռ նրկար ժամանակ համար դիմադրության է հանդիպում հնավանդ մանկավարժների կողմից: Հայ պարբերական մամուլում բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ «Հին եղանակը գիմ, այբ-գա, բեն, ինի, ծա-թիծ, դեռևս տիրապետում է այստեղ /խոսքը գնում է վլադիկավակա ծխական դպրոցի մասին/: Իսկ մի ուրիշ վկայությանը նույնիսկ 80-ական թվականներին ուսուցման հին եղանակը մնացած է եղել «Խուլ ու խավար անկյուններում»:/4/:

«Նախաշավիղի» մեթոդական ներածականում Աբովյանը հանգամանորեն բացատրում է իր մեթոդի էությունը, ուսուցչին տալիս է մանրամասն ցուցումներ, թե այդ մեթոդը ինչպես պետք է կիրառել: Դասագիրքը, որ այբբենաբան և ընթերցարան է միաժամանակ, նոր նրկայք էր հայերեն լեզվի մինչ այդ լույս տեսած գրաբար, կրոնական նյութերով լի, ծանրամասն և տաղտոլի դասագրքերի համեմատությամբ:

Ի միջնայուց, պետք է նկատել, որ Աբովյանն ինքն է սկսել «Նախաշավիղը» տարածել ուսուցչության շրջանում: Պերճ Պռոշյանը իր «Հուշիկներ»-ում վկայում է այդ մասին: «Գյուղական վարժապետներ» վերնագրի տակ Պ. Պռոշյանը մի մեծ հոդվածաշար տպագրեց «Արձագանք»-ում: Վերջին հոդվածներից մեկում Պռոշյանը պատմում է Աբովյանի այցելություններն Աշտարակի դպրոց, որ Պռոշյանը սովորելիս է եղել: Աբովյանը, Պռոշյանի վարժապետին դիմելով, ասում է. «Ես ընդ մի գիրք կորկեմ, վարժապետ, կարելի է դու նրանից մի բան հասկանաս և այնպես սկսես սովորեցնել...այն գրքի մեջ իմ ասած դասատվության եղանակը մանրամասնորեն նկարագրած է, այնտեղ կտեսնես, որ ավելի հեշտ է երեխային տառերի հնչյունների հետ ծանոթացնել, հնչյուններով ծայները միացնել, քան թե այբ, բեն անուններ տալով, այն գիրքն իմ շինածն է և աշխարհաբար է, դու նրա առաջաբանը լավ կարդա» /5/: Ինչպես հաստատում է Պռոշյանը, Աբովյանն իր խոստումը կատարեց. վարժապետին ուղարկեց գիրքը, մեկն էլ՝ Պռոշյանի առաջին դասարանի համար պարգև:

Աբովյանի մեծ ծառայությունը հնչական մեթոդի խնդրում ամենից առաջ այն է, որ նա համարձակորեն հռչակեց, քարոզեց այդ մեթոդը, բացատրեց նրա էությունը, ինչպես և կարողացավ այն հաջողությամբ կիրառել իր դասավանդման պրակտիկայում: Նա առաջ տարավ հայոց այբուբենի ուսուցման մաշտոցյան մեթոդը՝ տառահնգական փուլը բացառելով և հնչական փուլը նրկարաձգելով: Նա առաջինը հայ իրականության մեջ փորձեց ստեղծել միսրոպյան այբուբենի ուսուցողական տարբերակը՝ ծառանալով սրբագած այբուբենի կույր: հետևողների հոծ բանակի ղեմ:

Հայ ժողովրդի լավագույն գավակի անուրանալի և շնորհակալ գործի գնահատությունը կարելի է համարել գերմանացի ճանապարհորդ Մ. Վագների խոսքը, որը դեռևս 1843

\* Այդ մասին մանրամասն տես Ն. Աբովյանի «Նախաշավիղը» որպես գրաճանաչության ուսուցման 1-ին փորձ, Արցախ, 1992թ., N2-3, Մտեմի, էջ 38-40:

թվականին Թիֆլիսում այցելում է Աբովյանի բացած դպրոցը և մեծ հաճությամբ արժանագրում. «Այս դպրոցը շատ անգամ գացի, ու հայ տղոց յառաջադիմութեանը վրայ շատ զարմացայ: Տասը տասնուչորս տարուան տղաք աղել կկարդան ու կը գրեն հայերէն, վրացերէն, թաթարերէն, ռուսերէն, գերմաներէն, գաղղիկերէն: Ստուգիվ շատ զարմացայ» /6/:

Մ.Վազնիրի այս բարձր կարծիքը օբյեկտիվ է, քանի որ Ն.Աբովյանն առաջին ռուսահայն էր, հայ դպրոցի սրտացավ ու հասկացող բարեկամը, որ ճանաչել էր գերմանական դաստիարակությունը ու ուսուցման բնական ու հեշտ միջոցները յուրացրել էր Դորպատում: Եթե բախտը ժպտար Աբովյանին, և նա իր հայրենիքում գտնէր ուշադիր վերաբերմունք՝ ղեկավար ընդունակություններն ու բերած գիտելիքների պաշարը, այն ժամանակ հայ դպրոցը ղեկավարէր 19-րդ դարի 40-ական թվականներին, Լեյպցիգի արտահայտությամբ... անվիճելի ճշմարտություն դարձած կլիներ» /7/:

Սակայն դա, ցուրտ, տեղի չունեցավ, և գրաճանաչության ուսուցման նոր մեթոդ ստեղծելու Ն.Աբովյանի բարձրացրած և հետագայում հայ նշանավոր մանկավարժ-մեթոդիստների կողմից շատ թե՛ քիչ չափով արժարժած հարցը մնում էր որպէս ամենագլխավոր նյութը տարրական ուսուցման գործում:

Ծարունակվում են որոնումները գրաճանաչության մեթոդի կատարելագործման ուղղությամբ:

Մեթոդի որոնման և զարգացման ճանապարհին տպագրվում են այլևայլ այբբենարաններ, որոնցից, սակայն, ամենաուշագրգիզն ու ողջունելին 1871 թ. Թիֆլիսում լույս տեսած Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու, առաջին տարի» դասագիրքն է, որը նոր ժամանակի, նոր ուղղության նախակարգադրան էր, և որը քաղաքացիության իրավունք տվեց հնչական մեթոդին:

Ն.Տեր-Ղևոնդյանի այբբենարան-դասագիրքը, կազմված լինելով հնչական մեթոդով և իր վրա կրելով ռուս նշանավոր մանկավարժ Կ.Ռիչինսկու «Рольное чтение» դասագրքի գիտելցությունը, գալիս էր բավարարելու տարրական քերականության համամատարաբար ավելի կատարյալ դասագրքի կարիքը, կարիք, որ գնալով ավելի ու ավելի էր զգացվում:

Դասագրքի այս պահանջը մասնակիորեն բավարարելու նպատակ էր հետապնդում նաև համարյա միաժամանակ լույս ընծայած Կ.Ռիչինսկու մյուս ոչ պակաս նշանավոր դասագրքի՝ «Летский мур»-ի նրկալ մասերն էին քաղաքացիությանն ընդունողներին ինքնուրույնացման փորձերի, առանց նույնիսկ հեղինակի անվան: Նույն Ռիչինսկու նմանությամբ Ն.Տեր-Ղևոնդյանը ստեղծում է մայրենի լեզվի թե՛ ընթերցանության և թե՛ քերականության դասագրքեր:

Իր դասագրքի առաջադրանքում հեղինակը ցույց է տալիս տարրական քերականության օգտակարությունը մայրենի լեզվի խոր ու հաստատուն յուրացման համար:

Եվ տեղին, քանզի մայրենի լեզուն մտավոր զարգացման հիմքն է և բոլոր գիտելիքների գաճառարանը: Ամեն մի հասկացողություն նրանից է սկսվում, նրա միջոցն է անցնում և նրան է վերադառնում: Մայրենի լեզուն ընդունելով տարրական դպրոցի ուսուցման գլխավոր մասը՝ հենց այդ պատճառով էլ տարրական դպրոցի ուսուցման համար կազմած գրքերը հիմնականում անվանվում էին «Մայրենի լեզու», չնայած որ նման գրքերն ընդգրկում են ոչ միայն քերականություն, այլ նաև մի ամբողջ շարք գիտելիքներ իրական աշխարհի մասին:

Ն.Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու» դասագրքի գործադրած նդանակի առանձնահատկությունն այն էր, որ քաղաքայնությանն ու իրազնական զգմանը կցվում են լեզվի դասերին, այսինքն՝ տրվում է քաղաքայնության պատմություն, որի գլխավոր առարկան իրազնական նյութը անտր է լինի, իսկ այդ առարկայի անունը անտր է վերցվել՝ կարդալն ու գրելն սովորեցնելու համար /ընդգծումը մերն է- Յ.Մ./:

Այսպես, օրինակ՝ «Ազգա շունը» թեմատիկ նկարի վրա անցկացնելով դասի քաղաքայնության և իրազնական մասը /որտեղ, իմիջիպաշտ, ավելորդ և ցրվածների ուշադրությունը անհարկի շեղող շատ քան կա /ուսուցիչն առում է, որ մինչև հիմա գնցվեց շունն հեղե առարկա, իսկ հիմա կփորձենք գնել այն հեղե օտա՝ Որպես առարկա քննելիս՝ մենք օգտվեցինք մեր տնտրությունից, այսինքն՝ շան նկարը տեսանք, բնութագրեցինք, իսկ որպես օտա քննելիս՝ պետք է իմանանք, թե՛ ինչպես է կազմված շուն բառը: Դրա համար պետք է

ուշադիր և լավ լսել: Այնուհետև ուսուցիչը մի քանի անգամ կրկնում է շուն բառը՝ նրկարացնելով և շեշտելով մերթ առաջին /շ/,մերթ նրկորդ /ո/, մերթ էլ նրկորդ /ն/ հնչյունը, այսինքն՝ բառը հնչյունային վերլուծության է ենթարկում /1/, ցույց տալիս, որ շ և ն հնչյունները բաղաձայն են,իսկ լ-ն՝ պարզ է,ձայնավոր /2/: Խորհուրդ է տալիս այդ բաղաձայններն անալիզման արտառանել առանց ը-ի: Մա բառի վրա տարվող աշխատանքի առաջին կետն է՝ նրկու մասից բաղկացած: Ապա տալիս է անծանոթ բառեր, ասենք՝ մուկ, կատու, տուն, նոր, էշ և այլն ու պահանջում դրանցում գտնել ծանոթ հնչյունը /3/: Այնուհետև պահանջում է այդ ծանոթ հնչյուններով /շ,ո,ն/ սկսվող բառեր գտնել:

Վերջին աստիճանում ուսուցիչը մոտենում է գրատախտակին և նախ՝ օդի մեջ՝ մատով, ապա գրատախտակին ցույց տալիս, թե ինչպես սկսեց և ինչպես վերջացրեց կոնկրետ այս կամ այն տառի գրությունը: Հետո հանձնարարում է, որ աշակերտները իրենք գրեն:

Ինչպես տեսանք, բառի վրա կատարվող աշխատանքն անցնում է չորս աստիճան.

1. Վերլուծություն առարկայի անվան,
2. Հնչյունների համեմատություն,
3. Ծանոթ հնչյունի գտնելն անծանոթ բառում,
4. Ծանոթ հնչյուն-տառի գրությունը:

Այս ձևով ուսուցիչը անցնում է տասը դաս, որոնց մեջ, որպես ուսումնասիրվող կարևոր բառեր՝ հանդես են գալիս շուն, էշ, բադ, սագ, հավ, օձ, կատու, ոգնի, միդու, ճանճ բառերը, առանց դասագրքերին դիմելու, քանի որ գործ ունեն միայն նկարների և հնչյունների հետ: Այս տասը դասերի ընթացքում նա աշակերտներին ծանոթացնում է քսաներկու հնչյունի հետ /շ, ու, ե, շ, ք, ու, օ, գ, հ, փ, օ, ծ, փ, ւ, փ, օ, ղ, ճ/, սակայն գրել է տալիս դրանց միայն մի մասի տառերը: «Ոգնի» բառը պարունակող նկար-պատմությունն անցնելիս ուսուցիչն աշակերտներին հասկացնել է տալիս, որ թեև ո-ն բադը հնչյուն է, բայց բառի սկզբում «օ» հնչյունի համար օգտագործում ենք մի նշանագիր, այն է՝ ո, ոչ թե գրում նրկու տառով: 11-րդ դասը նորից ստիպում է անդրադառնալ ո տառին. այստեղ ուսուցիչը ցույց է տալիս, որ ո և օ տառերը բառի սկզբում պահում են իրենց հնչման ձևը /օ և օ/, իսկ բառի մեջ կարդացվում են միանման /օ/: Նույն ձևով են բացատրվում նաև ե,և,է հնչյուն-տառերը: Հեղինակը պարզող չի անում նաև տառերի գրության ձևերը, և 13-րդ դասից սկսած տալիս է գլխատառերի գրության ձևը:

Դասագրքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սկզբնական շրջանում նոր անցվող տառը առանձին, ընդգծված ձևով չի տալիս՝ բաղաձայնի հետ լավոր ը-ից խուսափելու նպատակով:1

Ինչպես արդեն նշել ենք, Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու» այբբենարանը, լինելով Կ.Ուշինսկու «Родное слово»-ի հետևողությանը կազմված և մեծամասամբ թարգմանված դասագիրք,այնուամենայնիվ, աչքի է ընկնում իր ազգային ոգով,գրքի հալ կազմող աշխատել է մոտիկ մնալ հայոց լեզվի հարազատ ոճերին,ունի նույնիսկ շատ ինքնուրույն հատվածներ: Այս առումով «Մայրենի լեզուն» առաջին քարն էր, ռուսական նոր ազդեցության առաջին նրկայթը:

Ն.Տեր-Ղևոնդյանի այբբենարանում կան նաև հետաքրքիր միջոցներ ու եղանակներ: Հետագա հրատարակությունների ժամանակ նա անընդհատ փոփոխության է ենթարկել՝ բարելավելով ու հարմարեցնելով ժամանակի պահանջներին: Այսպես, 1913թ. հրատարակության մեջ /թվով 27-րդ/ մտցված են այնպիսի փոփոխություններ, որ այբբենարանը կարողանա միաժամանակ ծառայել հայախոս և օտարախոս հայ մանուկներին: Այդ նպատակով նա սկզբից տվել է այնպիսի բառեր,որոնք ունեն թուրքիս հասկանալի իմաստ: Այդպիսիք են ձայնարկություններ՝ ա՜յ,օ՜յ,ն՜յ,վա՜յ,է՜յ և այլն: Այբբենարանը մանուկներին հայտնի էր նաև «Արփիկ» վերտառությամբ:

Խ.Աբովյանի հնչական ու Ն.Տեր-Ղևոնդյանի կողմից զարգացնելու հետևանքով ճանաչում գտած նոր մեթոդի հետագա կատարելագործման և տարածման գործում որոշակի

\* Ընդհանրապես ը հնչյունի գործածությունը բաղաձայնների արտաբերման ժամանակ եղել է վիճաբանության առարկա: Այդ մասին խոսել ենք Ղ.Աղայանի մեթոդն ուսումնասիրելիս:



դեր են խաղացել նաև Գ.Տեր-Ալեքսանդրյանը, Ա.Երիցյանը, Զ.Գրիգորյանը և ուրիշներ, որոնք Աբովյանի և ռուս մեթոդիստների հետևողությամբ հնչյունային մեթոդով պարապելու նոր այբբենարաններ են ստեղծել, կազմել են մեթոդական ուղեցույցներ ու հանձնարարականներ, դաս են տվել դպրոցներում և այլն:

Ամեն մի դասագիրք խոսում է լինում, երբ ունենում է մի մեթոդական ուղեցույց: Այսպես, Ն.Տեր-Ղևոնդյանի դասագիրքն ունի առաջաբան, բայց ոչ մեթոդական ուղեցույց, որի պատճառով էլ դժվարանում էր նրա օգտագործումը: Հեղինակը նույնպես զգում էր մեթոդական ուղեցույցի կարևորությունը և մի առիթով նշում, որ խիստ կարիք է զգացվում մանրամասն բացատրական ձեռնարկի, մի բանալու: Նաև խոստանում է հայոց լեզվի ուսուցիչներին տալ մեթոդական ուղեցույց, որը, ցավոք, ի վիճակի չի լինում իրականացնելու:

Վերը ասվածին ցանկանում ենք ավելացնել նաև այն միտքը, որ մայրենի լեզվի ուսուցման համար թեպետ մեծ նշանակություն պետք է տալ դասագրքին, ինչպես նաև մեթոդական ուղեցույցին, բայց չպետք է սահմանափակել կարևոր գործոններից մեկը՝ ուսուցչի դերն ու նրա ինքնուրույնությունը: Ինչ արժեն լավագույն դասագիրքն ու մեթոդական ուղեցույցները, եթե դրանք չեն գտնվում նույնքան որակյալ կադրերի ձեռքին:

Այս հարցում գովասանքի է արժանի Պետերբուրգի համալսարանը, որի հիմնադրացիներից մեկը հայազետ մասնագետների պատրաստման գործն էր: Այս պրոբլեմը անխզելիորեն առնչվում էր համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի գործունեության հետ: Դեռևս 1845թ. համալսարանի պատմալեզվագրական ֆակուլտետին կից առանձնացվում է արևելյան բաժանմունքը, հաստատվում են անդրկովկասյան լեզուների ամբիոնները, իսկ 1855-ից այն վերափառացվում է արևելյան լեզուների ֆակուլտետին: Ի տարբերություն ռուսական այլ կրթական օջախների՝ Պետերբուրգի համալսարանը, տարբեր գիտությունների գծով մասնագետներ պատրաստելու հետ մեկտեղ, որոշակի դեր է խաղացել հայազետ գիտնական մանկավարժներ պատրաստելու գործում: Այս համալսարանից դուրս եկած փայլուն հայազետները գիտահետազոտական աշխատանքներում, մանկավարժական գործունեությամբ առաջ մղեցին հայագիտությունը, բարձրացրին պետականությունից զուրկ հայ ժողովրդի ազգային ինքնաճանաչողության զգացումը, բարելավեցին ազգեցություն ունեցած հայոց լեզվի ու գրականության դասավանդման դրվածքը բարելավելու գործում:

19-րդ դարի 60-ական թվականների հեղաբեկումների ժամանակաշրջանում Պետերբուրգում սովորող հայ նրիտասարդությունը որոշակի դեր է խաղում հեղափոխական դեմակրատների, ինչպես նաև ռուս մանկավարժության նահապետ Կ.Ուլիսևու, Լ.Տալստոյի և նրանց հետևորդների գաղափարները պրոպագանդելու, տարբեր առարկաների դասավանդմանը և ընդհանուր մանկավարժական հիմնադրացիների վերաբերող ուսումնամեթոդական գրականություն ստեղծելու ասպարեզում: Այսպես, 1869թ., ինչպես վերևում նշել ենք, համալսարանի ուսանողությունը անվանի մանկավարժ Ս. Մանդիկյանի գլխավորությամբ Ուլիսևու ռուսաց լեզվի մեթոդական ուղեցույցի, կորֆի և Պաուստի աշխատությունների հետևողականությամբ կազմում է «Հայերեն կարգալ և գրել ուսուցանելու հրահանգ»՝ ինչպես մեթոդով, ինչպես նաև շարժական տառեր տարածում հայկական դպրոցներում և դրանով իսկ նոր մղում և ուժ են տալիս 19-րդ դարի առաջին կեսին գրաճանաչության ուսուցումը հնչական նդանակով կազմակերպելու՝ Ն.Աբովյանի սկսած գործին:

«Հրահանգն», սաեմ, գալիս էր վերացնելու ուսումնասիրվող ժամանակաշրջանում հրատարակված գրքերի թերությունը, այն է՝ գրաճանաչության դասավանդման մեթոդական ուղեցույցների պակասը: Մակայն այդպես չեղավ, քանի որ տվյալ ժամանակահատվածում գոյություն չունեի դպրոցական կրթության կայուն համակարգ, մանկավարժական միտքն ու մեթոդական փորձը ցարսցրիվ էին, ոչ ի մի հավաքած: Ասվածին եթե ավելացնենք նաև այն հանգամանքը, որ շատ թե քիչ նշանավոր մանկավարժներ ձգտում էին իրենց հրատարակած դասագրքերով ու մեթոդական ուղեցույցներով հատկապես և միայն հոենց մեթոդներն առաջ քաշել ու տարածել, հասկանալի կլինի, թե ինչու 1869 թ. հրատարակված «Հրահանգը» մեթոդական ուղեցույց չհանդիսացավ 1871թ. հրատարակված Ն.Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու, առաջին դասարան» այբբենարան - դասագրքի համար, չնայած որ նրկուսն էլ առաջնորդվում էին Աբովյանի

կողմից հռչակած հնչական մեթոդով:

Մենք արդեն խոսել ենք Ն.Տեր-Ղևոնդյանի այբբենարան-դասագրքի մասին, նկարագրել ենք հնչական կողմից առաջ քաշած գրութուցման դասը և մեթոդը, ուստի շատ համառոտ կերպով կ'առնեք «Հրահանգ»-ի կողմից նախատեսած գրաճանաչության դասի նկարագրության վրա, որը բավականաչափ նպաստեց հնչյունային մեթոդի տարածմանը:

Ըստ «Հրահանգի»՝ նախատեսվում էր գրաճանաչության դասը վարել հետևյալ կառուցվածքով.

1. Բառի հնչական վերլուծություն,
2. Գրություն,
3. Գրածի ընթերցանություն,
4. Ծարժուն տառերից բառերի կազմում և նրանց վերլուծություն,
5. Այդ բառերի գրություն,
6. Գյուտ այնպիսի բառերի, որոնց մեջ լինի պահանջված հնչյունը:

Ինչպես տեսնում ենք, «Հրահանգը» որոշակի տարբերություններ ունի Տեր Ղևոնդյանի վարած դասի կառուցվածքից, և այդ տարբերությունները «Հրահանգի» օգտին են, քանի որ նրա նախատեսած գրաճանաչության դասի կառուցվածքը գրեթե ժամանակակից կառուցվածք է և այն, անկասկած, դրական ազդի շատ ազդեցություն է ունեցել նոր մեթոդի տարածման գործում, չնայած այդ տեսակետի հեղինակ և ուղեցույցի ղեկավար Ս.Մանդինյանը հետազայում փոխեց իր կարծիքը և դարձավ իր իսկ նախընտրած մեթոդի հակառակորդներից մեկը:

Եզրակացնենք:

1. Հայ դպրոցում գրաճանաչության ուսուցման հնչական մեթոդի գործադրման քաղաքական փորձեր են ևղծվ:

2. Հնչական նշանակով գիր սովորեցնելը բոլորովին նորություն չէր մեր մեթոդիկայի պատմության մեջ. այդ մեթոդը ուսումնասիրեց և հռչակեց Երջանկահիշատակ Ստաշատուր Աբովյանը դեռևս 19-րդ դարի առաջին կեսին՝ փաստորեն դարձրել փոշին թոթափելով հայ իրականության մեջ հնչական մեթոդով դասավանդած մեր առաջին ուսուցչական Մանրոպ Մաշտոցից:

3. Գրաճանաչության մեթոդի ուսումնասիրության և զարգացման շարժումն այլևս կանգ չառավ: Խ.Աբովյանից մոտ քսան տարի հետո Թիֆլիսի գիմնազիայի հայ աշակերտները /Գ.Տեր-Ալեքսանդրյանց, Ա. Երիցյանց, Զ. Գրիգորյանց և ուրիշներ /վերանորոգեցին հնչական եղանակը մի այբբենարանով և սկսեցին ձրի դաս տալ Թիֆլիսի ծխական դպրոցներում, որ այդ նոր ձևն ընդհանրացնեն: Նույն ժամանակ Պետերբուրգի հայ ուսանողները ևս հրատարակեցին մի այբբենարան դարձյալ հնչական եղանակով:

4. Մանկավարժական ու մեթոդական մտքի փայլատակման շրջան էր ուսումնասիրվող էտալը՝ նաև ռուսական իրականության մեջ, որ արդեն ՌՈՂինսկիյի իր այբբենարանով մեծ հռչակ էր ստացել ոչ միայն Ռուսաստանում, այլ նրանից դուրս: Եվ ահա Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը թարգմանեց Ուլինսկու «Романо слово» այբբենարանը և վերջինիս նմանությամբ հրատարակեց իր «Մայրենի լեզու, առաջին տարի» դասագիրքը 1871թ.: Սա մի առաջընթաց քայլ էր դեմոկրատական մանկավարժության ու հայ ազգային դպրոցի զարգացման ճանապարհին:

5. Մակայն գրաճանաչության մեթոդի հստակեցման ու հետագա զարգացման ղեկըրումներում վերոհիշյալ աշխատանքները ցանկացած արդյունքի չիաասան, որովհետև դրանք բոլորն էլ միայն գրագիտության ուսուցման, այսինքն՝ երեխաներին միայն գրաճանաչ դարձնելու նպատակ էին հետապնդում և, ըստ էության, միմյանցից շատ քիչ էին տարբերվում թե՛ բովանդակությամբ և թե՛ մեթոդական մշակմամբ: «Հնից էլ տարբերվում էին միայն նրանով, որ այբ ասելու տեղ ասել էին տալիս ա, բեն ասելու տեղ՝ բը» /8/:

6. Վերոհիշյալից պարզ է, անկասկած, որ նշանավոր, թե՛ աննշան դեմքերից շատերը այս կամ այն չափով նպաստել են հնչյունային մեթոդի տարածմանն ու արմատավորմանը հայ դպրոցում, բայց այդ մեթոդի օգտին ավելի վճռական ու հիմնավոր խոսքը դեռ մնում էր ասվելու:

հնչյունային մեթոդը, որի մասին մանրամասն խոսվում է «Գրուսուցման Դ. Աղայանի մեթոդը» ատենախոսության մեջ (3.Մ):

## Ամփոփում

19-րդ դարը հայ մանկավարժության պատմության և մեթոդիկայի բնորոշ ժամանակաշրջանն էր: Այս էտապում հանդես եկող շատ թե՛ քիչ նշանավոր դեմքերը ուղղակի կամ անուղղակի կապ են ունեցել դպրոցի, մանկավարժության հետ:

Հայ իրականության մեջ մանկավարժական հին, հետադիմական հասկացողությունների դեմ առաջին խիզախ մարտնչողը եղել է Խ.Աբովյանը՝ նոր, առաջավոր կրթական գաղափարներից ոգեշնչված պետգամաբեմը: Նա, հանդես գալով տառահեղական մեթոդի խիստ քննադատությամբ, ուսուցումն ավելի մատչելի դարձնելու նպատակով սկզբնավորում է հնչական մեթոդը և այդ մեթոդով կազմում իր «Նախաշավիղ» այբբենարան-դասագիրքը:

Շարունակվում են որոնումները գրաճանաչության մեթոդի կատարելագործման ուղղությամբ: Հնչական մեթոդի զարգացման ու կատարելագործման ուղղությամբ թավականին ջանքեր թափեցին Ստ.Նազարյանը, Ն.Տեր-Ղևոնդյանը և ուրիշներ: Մակայն գրաճանաչության մեթոդի հստակեցման ու հետագա կատարելագործման դեգերումներում աշխատանքները գանկալի արդյունքի չհասան, որովհետև դրանք թույլում էլ միայն գրագիտության ուսուցման, այսինքն՝ երեխաներին միայն գրաճանաչ դարձնելու նպատակ էին հետապնդում և, ըստ էության, միմյանցից շատ քիչ էին տարբերվում թե՛ թովանդակությամբ և թե՛ մեթոդական ձևերով: Այս գործում իր թարմ ու կայուն խոսքն ասաց հայ մանկավարժ-մեթոդիստ Հազարու Աղայանը:

## Резюме

19-ый век был плодотворным периодом для развития армянской истории педагогики и методики.

Многие известные и не очень известные личности, публикующие свои труды на этом этапе, имели прямую или косвенную связь со школой, педагогической наукой.

Х.Абовян в армянской действительности был одним из первых смелых борцов против отсталых педагогических методов. Он заложил основу фонетического метода и, используя его, составил книгу-азбуку “Нахашавиղ”.

В развитие и совершенствование звукового метода большой вклад внесли Ст. Назарян, Н.Тер-Гевондян и др. Свое живое и твердое слово в этом деле сказал также армянский педагог-методист Г. Агабян.

## Գրականություն

1. Ռ.Զարյան, Աբովյանի կյանքը, Երևան, 1954թ. 136 էջ, էջ ԺԳ:

2. Խ.Աբովյան, ԵԼԺ, հատ 5, Երևան, 1950թ., 508 էջ, էջ 49:

3. Նույն տեղում:

4. Ռ.Զարյան, Աբովյանի կյանքը, Երևան, 1954, 136 էջ, էջ ԺԴ:

5. Նույն տեղում, էջ 66:

6. Ա.Վարդապետյան, Գրաճանաչության ուսուցման տնտեսական հիմունքները, Երևան, 1970, 219 էջ, էջ 3:

7. ԼԷՕ – Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837-1912 թթ, Թիֆլիս, 1914, 585 էջ, էջ 233:

8. Հայ մանկավարժներ, գիրք Ա, Երևան, 1958, 622 էջ, էջ 45

## ՀԱՅ ԿԵՂՁ ԿԵՐՊԱՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Ն.Ա.Ավանեսյան

Գրականության և ժուռնալիստիկայի աճբիոն

Հոդվածի նպատակն է բացահայտել Բակունցի՝ հայ կնոջ կերպավորման յուրատեսակ արվեստը, միմիայն նրան բնորոշ գեղեցկության արտաքին ու ներքին հատկանիշները, հոգեկան ապրումներն ու ճակատագրերը:

Թե՛ հեթանոսական բանահյուսության և թե՛ գրականության մեջ հայ կինը գերազանցապես պատկերվել է որպես արտաքին ու ներքին գեղեցկության տիպար: Դասական հայ կնոջը միշտ էլ բնորոշ են եղել բարոյական մաքրությունը, զգացմունքի խորությունը, պատվախնդրությունը, նվիրվածությունը, ամոթխածությունն ու ազնվությունը ( հիշենք Նուարդի վեհությունը, Մուրբ Շուշանիկի հավատարմությունը, Ծովինարի անձնագոհությունը, Անուշի սիրտ գեղեցկությունը և այլն) : Միաժամանակ մեր գրականության մեջ կանայք գրեթե միշտ պատկերվել են նրկորդական դերում, հանգստմանը, որն ունի կենսական հիմքեր, որովհետև իրականության մեջ էլ կնոջը վերապահված չի եղել առաջնային դեր:

Տարբեր են Բակունցի արձակի կին հերոսները: Տարբեր են նրանց ճակատագրերը, հոգեկան տպումներն ու զգացմունքները, նույնն է, սակայն կյանքը, կենցաղը, նրանց նկատմամբ եղած վերաբերմունքը: Առհասարակ, Բակունցի ստեղծագործություններում սկզբից մինչև վերջ ծավալվում է գեղեցկության կորուստի թեման, ընդ որում, այդ գեղեցկությունը նախ և առաջ կինն է: Այսպես, տրորված, կործանված գեղեցկություններ են «Ալպիական մանուշակը» անանուն կինը, խոնարհ աղջիկը, Սոնան, Մանդուխտը, Մայրանը, Տիգրանուհին:

Կաքավաբերդի կինը, ըստ նրկոյթին, Բակունցի՝ գեղեցիկ կնոջ պատկերացումն է: Խոսքն այս դեպքում առավելապես արտաքին գեղեցկության մասին է: Կաքավաբերդի կինը հազվագյուտ գեղեցկություն է՝ նուրբ շարժունակ, արտասովոր մուգ մանուշակագույն աչքերով, բարձր, սպիտակ ճակատով, արնագույն մեխակի թերթերի նման շրթունքներով, բարակիրան, բարձրահասակ, թիկունքն ի վար իջնող երկար ծամերով: Սակայն գեղեցկությունն ապրում է այնտեղ, ուր չեն գնահատում նրան, ավելի ճիշտ բան ու գործի մեջ խրված՝ անտեսում են, երբեմն էլ՝ տորում:

Ձուտ մարդկայնությունից մղված Կաքավաբերդի կինը մի պահ հյուրընկալում է անծանոթ եկվորներին և ցավ պատճառում իրեն: Նրա թիկունքին ջարդվում է լանդից բռնկված կռպիտ ամուսնու ծանր մահակը: Եվ սա կարծես արդեն բնական է դարձել գեղեցկության համար: Ով գիտե, այդպես քանի անգամ են վարվել նրա հետ, այսպես Կաքավաբերդի կինը սովորականի նման չէր ընդունի այդ. «Հնուտ Կաքավաբերդի գլխին լուրջություն իջավ: Օջախներում հանգավ կրակը, եղավ խավար գիշեր: <... > Ոչխարը պառկեց կանաչ վրա: Խսրի վրա մեկնվեց և կինը՝ թաղիքի տակ ծածկելով տղային» (I, 190):

Կաքավաբերդի կնոջ հոգեկան աշխարհի մասին ոչ մի խոսք չկա պատմվածքում: Բայց մի քանի ակնարկներից որոշակիորեն է նրա ներքին աշխարհը, ինչպես՝ «Կինը վեր կացավ, գլխի շորն արգգ իջեցրեց ճակատին և մատների ծայրով բռնեց երդորդ ձիավորի մեկնած ձեռքը: Մյուսներն էլ հետևեցին նրա օրինակին: Այս անգամ կինը ձեռքը կրծքին սեղմեց և խոնարհեց գլուխը» (I, 187) կամ՝ «Մայրը նայեց տղային, հրդեհվեց դնքը» (I, 189), ինչպես նաև՝ «Կինը աղաղակ չհանեց, այլ ցավից գալարվեց: Նա ձեռքը թիկունքին տարավ, ապա դուրս եկավ՝ վրանի դռները անձայն հեկեկալու» (I, 189):

Ամոթխած, զգայուն, հոգեկան խորքեր ունեցող քնափորություն է Կաքավաբերդի կինը, որը բարոյապես գեղեցիկ է մնում նույնիսկ այն պահին, երբ թիկունքին ջարդվում է գազազած ամուսնու ծանր մահակը: Հակառակ ամուսնու դաժան արարքի, նա ոչ մի խոսք չի ասում, լուռ հաղթահարում է ցավը, լաց լինում հոգու խորքում: Մա դրամատիկ նրանց է հաղորդում նրա կերպարին, ստեղծում չկայացված կյանքի տխուր տապալություն:

Ցաված մի ուրիշ գեղեցկություն է խոնարհ աղջիկը: Այս դեպքում ևս կերպարի բացահայտման հարցում գրողը ժլատ է: Մի քանի բնորոշումների մեջ, սակայն, խտացված է



չափված բառերի, հոգու խորքում պահված նվիրական ապրումների ոչ սովորական մի գեղեցիկ աշխարհ: Դա Բակունցի, կարելի է ասել, միայն իրեն բնորոշ խոսքի արվեստն է:

Թվում է՝ սիրո զգացումը փոխադարձ է: Խոնարհը ևս անտարբեր չէ ուսուցչի հանդեպ: Բայց նա հոգու խորքերում թաքցնում է զգացումը, ոչ մի խոսք չի ասում, կարծես բառերը փչրելու են զգացումի գեղեցկությունը: Կա նաև մի այլ հանգամանք: Լռության խախտումը այս դեպքում կարծես խախտելու է նաև քաղաքական ընդունված պատկերացումները: Ուսուցչի նրկելու խոստովանությանը թե՛րևս Խոնարհը կարող էր արձագանքել հուսալի մի բառով, անգամ լռությանը, բայց մի հատիկ բառով նա ինքնաբերաբար կորցնում է սպասված պահը՝ ԹՊ:

Ինչքան էլ Խոնարհը իր նրազանքներում ուրվագծած լինել այդ պահը, ինչքան էլ իր սպասումների մեջ նվիրական բառեր ունենալ նրա համար պահած, միևնույն է, Խոնարհը սովոր չէ բառերով արտահայտվել: Այդ բառերը ուսուցիչը կարող էր գտնել միայն Խոնարհի՝ շիկանքից թռկված հայացքների մեջ, նրա աչքերի խոնարհումի, նրա խուսափուկ վարվելձևի, ամոթխած ու ցաված ժպիտների մեջ:

Լռությունը ցավ է բերում Խոնարհի հոգուն, քանի որ ուսուցիչը չի հասկանում չարաքերված բառերի ներքին իմաստը: Այդ չհասկացված լռությունն էլ դաժան վերջակետ է դնում Խոնարհի նրջանիկ սպասումների վրա: Չկա ցանկալի խոստովանությունը, որովհետև սիրո բառերը հալվում են Սթենաժորին բնորոշ լռության մեջ: Սակայն ինչքան էլ Խոնարհին տառապանք բերեր նրա ամոթխածությունը, միևնույն է, նա չի կարող հաղթահարել այդ հոգեվիճակը, քանի որ դա արդեն նրա էությունն է: Դա նաև նրա համար կենսագոյություն է՝ թնիադրված ինչ-որ տեղ միջավայրի կողմից:

Ուսուցիչը անխոս թողնում է, հեռանում: Նա ևս բառեր չի գտնում Խոնարհի համար: Մնում է Խոնարհը՝ խորտակված հոգով, «ծնոթին քաղհանի բիրը, կարմիր պուտ և մոխրխոտի մի կապ»: Վերջին բառերն արդեն հուշում են Խոնարհին սպափող ծանր առօրյայի մասին:

